

# **ՄԱՍ Ի**

## **ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑԸ**

**ՍՈՅԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՍԻՆ**

### **ՄԱՍ Ի -Ա**

**2009 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության  
հիմնական ուղղությունները**

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության ծրագրի, ՀՀ ազգային անվտանգության ուղղականության, Աղքատության հաղթահարման ուղղական ծրագրի վերանայված տարբերակի (ԱՀՌ-2), Հակակոռուպցիոն ուղղականության և ՀՀ 2009-2011թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրի պահանջները՝ 2009թ. սոցիալ-տնտեսական քաղաքականությունը նպատակառությամբ է լինելու տնտեսական աճի բարձր և կայուն տեմպերի պահպանմանը, մակրոտնտեսական կայունության ապահովմանը, բնակչության, հատկապես անապահով խմբերի կենսամակարդակի բարձրացմանը, տարածքային համաշափ զարգացմանը, աղքատության հաղթահարմանը, գործազրկության շարունակական նվազեցմանն ու դեռևս առկա սոցիալական և տնտեսական այլ հիմնախնդիրների լուծմանը:

#### **Տնտեսական զարգացում**

Երկրի տնտեսական զարգացումը որակապես նոր հարթություն տեղափոխելու, տնտեսական աճի բարձր տեմպերի պահպանման, գործարար և ներդրումային միջավայրի շարունակական բարելավման, մրցունակ, արտահանման կողմնորոշում ունեցող և ներքին ռեսուրսների հիման վրա գործող ճյուղերի գերակշռության ապահովման, բնակչության զբաղվածության և բարեկեցության մակարդակների շարունակական բարձրացման և աղքատության մակարդակի նվազեցման նպատակով 2009 թվականին իրականացվող առաջնահերթ միջոցառումները կհանդիսանան.

#### **Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում**

Օտարերկրյա ներդրումների ներգրավումը և գործարար միջավայրի բարելավումը, հանդիսանալով ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության գերակայություններիից մեկը, ուղղված է լինելու օտարերկրյա կապիտալի և շուկաների փոխադարձ հասանելիության

բարձրացմանը, ներդրումների ներգրավմանը, նրանց պաշտպանության խնդիրներին, վարկային ռեսուրսների մատելիության բարձրացմանը, պետական կառույցների հետ ներդրողների շփումների հնարավորինս պարզեցմանը և հստակեցմանը, վարչարարական խոչընդուների նվազեցմանը, օտարերկրյա և տեղական ներդրումները կարգավորող օրենսդրության հստակ կիրարկման ապահովմանը:

**Արտաքին առևտութի** բնագավառում իրականացվող միջոցառումներն ուղղված կլինեն ՀՀ կառավարության կողմից որդեգրած արտաքին առևտութի ազատական սկզբունքի պահպանմանը, ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարմանը, հայրենական ապրանքների և ծառայությունների արտաքին շուկա մուտք գործելու աջակցության ցուցաբերմանը, Հայաստանի միջազգային հեղինակության բարձրացմանը, արտահանման ծավալների ավելացմանը և ՀՀ համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրման համար բարենպաստ պայմանների ապահովմանը:

Կիրականացվեն աշխատանքներ միջազգային չափանիշներին համապատասխանող ապահովագրական համակարգի ձևավորման ուղղությամբ, ինչի արդյունքում որոշակիորեն կնվազեն ներդրումային գործունեության ռիսկերը:

Կշարունակվեն աշխատանքները ԵՄ կողմից ֆինանսավորվող «Վարչական և ինստիտուցիոնալ կառույցների հզորացում» (Թվինինգ) գործիքի ներքո իրականացվող «Կառավարման կարգավորիչ մեխանիզմների ներդրում «Ստանդարտ ծախսերի մոդելի» միջոցով» ծրագրի ուղղությամբ:

Ներդրումային ոլորտում գործընկեր երկրների հետ բարենպաստ իրավապայմանագրային դաշտ ձևավորելու նպատակով կշարունակվի ՀՀ կառավարության և այդ երկրների միջև «Ներդրումների փոխադարձ խրախուսման և պաշտպանության մասին» միջազգային Համաձայնագրերի կնքման գործընթացը:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված «Քիզնես միջավայրի «գերազանցության կենտրոն» համազգային նախագծի շրջանակներում կշարունակվեն աշխատանքները Հայաստանը տարածաշրջանում գործարար և ներդրումային միջավայրի «գերազանցության կենտրոն» դարձնելու ուղղությամբ:

**Ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման** ոլորտներում նախատեսվող միջոցառումների հիմնական նպատակն է լինելու նշված ոլորտների հետագա զարգացումը և ներդաշնակեցումը միջազգային և եվրոպական նորմերին: Մասնավորապես նախատեսվում է.

-առաջնային տեխնիկական կանոնակարգերի մշակում, որը կապահովի ԱՀԿ «Առևտությունների կառավարման համապատասխանության համաձայնագրով» ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարումը,

-ստանդարտացման ազգային համակարգի հիմնադրույթային ստանդարտների վերանայում՝ ՀՀ օրենսդրության և միջազգային ուղեցույցերի պահանջների ապահովման նպատակով,

-տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարումն ապահովող ազգային ստանդարտների ընդունում՝ միջազգային ստանդարտներին ներդաշնակ:

Կշարունակվեն աշխատանքները սպառողական շուկայում արտադրանքի և ծառայությունների որակի միջազգային ISO և CEN ստանդարտների ուղղակի կիրառման և սպառողների շահերի պաշտպանության պետական վերահսկողության համակարգի կատարելագործման ուղղությամբ:

Հավատարմագրման արդյունքների փոխանակածման բազմակողմ համաձայնագրերում հավատարմագրման մարմնի ակտիվ մասնակցությունը կնպաստի առևտրի հավասար պայմանների ստեղծմանը, կապահովի ապրանքների ազատ տեղաշարժը, ինչպես նաև անարգել կամ նվազեցված խոշոնդուտներով մուտքը դեպի համաշխարհային շուկա և կրացառի նույն ապրանքի կրկնակի փորձարկումն ու սերտիֆիկացումը:

**Ներքին շուկայի պաշտպանության բնագավառում** նախատեսվում է հայրենական արտադրողների գործունեությանը խոշոնդուտող հիմնախնդիրների բացահայտման և վերացման, հայրենական արտադրողների և սպառողների շահերի պաշտպանության, բարեխիղճ մրցակցային դաշտի ձևավորման և մենաշնորհային գործունեության չարաշահումների կանխարգելման ուղղությամբ աշխատանքների իրականացում:

Սպառողական շուկայի կանոնակարգման միջոցառումներն ուղղված կլինեն գործարար էթիկայի կանոնների ու ստանդարտների ներդրմանն ուղղված քաղաքականության իրականացմանը, տեղեկատվական բանկի ստեղծմանը, մատուցվող ծառայությունների որակի էական բարձրացմանը, դրանց հսկողության հարցում հասարակության հետ հետադարձ կապի ապահովմանը, սպառողական հասարակության ձևավորմանը, կորպորատիվ հսկողության կանոնների ստեղծման համակարգի ձևավորմանը:

**Մտավոր սեփականության բնագավառում** կշարունակվեն աշխատանքներն ուղղված տեխնիկայի և տեխնոլոգիաների զարգացման խթանմանը (գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների իրավական պահպանության մասով), ապրանքների և ծառայությունների իրացման հետ կապված շուկայական տնտեսության մշակույթի և բարեխիղճ մրցակցության ապահովմանը (ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների և ֆիրմային անվանումների իրավական պահպանության մասով), գիտության, գրականության և արվեստի զարգացման խթանմանը (հեղինակային և հարակից իրավունքների պահպանության մասով):

### **Տնտեսության ճյուղերի զարգացում**

**Արդյունաբերական քաղաքականությունը** նպատակառուղղված կլինի Հայաստանի՝ որպես արդյունաբերական երկրի կարգավիճակի ձեռք բերմանը, տնտեսական աճի կառուցվածքում արդյունաբերության տեսակարար կշռի ավելացմանը, գիտության և նորարարության արդյունքների ներդրման աջակցության միջոցով արտադրանքի վերամշակման խորացմանը, քիմիական, հանքահումքային բնագավառի ընկերությունների և գիտակրթական համակարգի գործուն

համագործակցության ձևավորմանը, հարաբերական մրցակցային առավելություններ, արտահանման կողմնորդում ունեցող և ներքին ռեսուրսներն օգտագործող արտադրությունների զարգացմանը, թերև արդյունաբերության ոլորտի զարգացման մոտեցումների վերանայմանը:

**Քիմիական արդյունաբերության ոլորտում** կիրականացվի հանրապետության քիմիական արդյունաբերության ներկա վիճակի վերլուծություն և զարգացման միջազգային միտումների բացահայտում: Հաշվի առնելով հանրապետության ներուժը, կձևավորվի ոլորտի նկարագիրը և շուկայի այն սեգմենտները, որոնցում Հայաստանը կարող է տեղ գրավել և լինել մրցունակ:

Կարևորելով **տեղեկատվական տեխնոլոգիաների** արդյունաբերության զարգացումը ոչ միայն որպես առանձին ոլորտ, այլ նաև որպես Հայաստանի տնտեսության ընդհանուր առաջնաբացի, արտադրողականության բարձրացման և համաշխարհային տնտեսության մեջ մրցունակությունը պահպանելու գործիք՝ ՀՀ կառավարությունը ջանքեր կգործադրի Հայաստանը դարձնելու առաջատար երկիր ընտրված բիրախային SS շուկաներում, ինչպես նաև զարգացած և առաջաեւմ տեղեկատվական հասարակություն ու գիտելիքների վրա հիմնված տնտեսություն ունենալու ուղղությամբ: ՀՀ կառավարությունը միջոցներ կձեռնարկի, որպեսզի Հայաստանն արտապատվիրվող ցածր արժեք ունեցող SS ծառայություններ մատուցող երկրից դառնա բարձր արժեքով առաջատար SS արտադրանք և ծառայություններ տրամադրող երկիր, ունենա հասարակություն, որը ձևավորված կլինի միջազգային բարձր չափանիշներին համապատասխանող տեխնիկական կրթության, տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ենթակառուցվածքի և համակարգչային գրագիտության հիման վրա:

Հայաստանում որպես ռազմավարական գերակայություն ընտրվել է **գիտահնովացիոն** տնտեսության զարգացման մոդելը, որի հիմքում դրված կլինի գիտելիքների գործնական կիրառությունը՝ բնակչության կենսամակարդակի ու երկրի տնտեսության մրցունակության բարձրացման, շրջակա միջավայրի պահպանության և երկրի պաշտպանունակության ամրապնդման նպատակով:

Սրա ներքո կիրականացվի նաև՝

-Ա.Ի Ալիխանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտում մշակված Cyclone-30 իզոտոպների արտադրության համակիրի տեղադրման և ՀՀ-ում միջուկային բժշկության կենտրոնի ստեղծմանն աջակցելու ծրագիրը, որը բույլ կտա տիրապետել ախտորոշման և բուժման առավել արդիական մեթոդների, արմատապես բարելավել բնակչության բժշկական սպասարկման մակարդակը, Հայաստանը դարձնել բժշկական նպատակներով օգտագործվող ռադիոնուկլիդներ արտահանող երկիր:

### **Տարածքային տնտեսական զարգացում**

ՀՀ կառավարության գերակայություններից է ՀՀ մարզերի համաշափ տնտեսական զարգացման քաղաքականության արդյունավետության էական բարձրացումը:

2009 թվականի ընթացքում կիրականացվեն ՀՀ տարածքներում գրոսաշրջության, արհեստագործության և ծառայությունների ոլորտների զարգացմանն ուղղված միջոցառումներ, որոնք

կնպաստեն ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի ստեղծմանը, ինչպես նաև ձեռագործ գորգագործության ոլորտի պետական աջակցության նպատակային ծրագրեր, որոնք կնպաստեն երկրում ինքնազբաղվածության մակարդակի բարձրացմանը:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից կմշակվեն մի շարք ծրագրեր ուղղված տարածքային տնտեսական զարգացմանը, որոնց հիմքում ընկած կլինի պետություն-մասնավոր հատված համագործակցությունը, մասնավորապես՝ «Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու հայեցակարգը»: Ծրագրերի իրականացումը կակավի Գյումրի քաղաքից՝ այն դարձնելով ժամանակակից գիտելիքային և նորամուծական ենթակառուցվածքներ ունեցող կենտրոն, որտեղ ներկայացված կլինին բարձր տեխնոլոգիաներ կիրառող ձեռնարկությունները, խոշոր կրթօջախներն ու գիտահետազոտական կենտրոնները:

**Կարևորելով ՓՄՁ-ի դերը** երկրի տնտեսության զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման, երկրում սոցիալական և քաղաքական կայունության ապահովման գործում՝ 2009 թվականին ՓՄՁ ոլորտի զարգացման և պետական աջակցության հիմնական ուղղություններն են լինելու.

-ՓՄՁ սուբյեկտներին աջակցության համապատասխան ենթակառուցվածքների ստեղծումը և ամրապնդումը,

-ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային հնարավորությունների ընդլայնումը,

-Պետություն-մասնավոր հատված համագործակցության ամրապնդումը,

-Սիջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակումը և իրականացումը,

-ՓՄՁ-ի սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցությունը:

**Զրուաշրջության ոլորտում** զարգացման առաջնային քայլերն ուղղված կլինին միջազգային զրուաշրջային շուկայում Հայաստանի՝ որպես զրուաշրջության համար գրավիչ և բարենպաստ երկրի նկարագրի ամրապնդմանը, միջազգային համագործակցության ակտիվացմանը, զրուաշրջության ոլորտում մատուցվող ծառայությունների կայուն որակի ապահովմանը, զրուաշրջային արդյունքի մրցունակության բարձրացմանը և ՀՀ մարզերում զրուաշրջության զարգացմանը:

### **Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում**

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտում ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականությունը 2009 թվականի ընթացքում ենթադրում է ակտիվ պետական տարածքային քաղաքականության իրագործում և տեղական ինքնակառավարման համակարգի գործունեության արդյունավետության հետագա բարձրացում:

2009 թվականին անհրաժեշտ կլինի.

**1.** Տարածքային անհամաշափ զարգացման համահարթեցման, մայրաքաղաքի և այլ քաղաքային ու գյուղական բնակավայրերի միջև տնտեսական ակտիվության մեծ խզվածության կրճատման նպատակով.

- ապահովել Հայաստանի մի շարք քաղաքների զարգացման տեմպերի արագացման և ներդրումային ակտիվության խրախուսման նպատակային ծրագրերի մշակումն ու իրագործումը,

- նպաստել մարզերում հանրային ծառայությունների (մասնավորապես՝ փոստային ծառայությունների, հեռախոսակապի, ինտերնետ կապի և այլն) հասանելիության աստիճանի բարձրացմանը,

- արտագնա նիստերի անցկացման միջոցով վերհանել մարզերի (տարածաշրջանների, համայնքների) սոցիալ-տնտեսական զարգացման կոնկրետ հնարավորությունները և իրականացնել դրանց իրագործմանն ուղղված համապատասխան միջոցառումները,

- պետական բյուջեից և այլ աղբյուրներից ֆինանսավորվող ծրագրերի միջոցով իրականացնել մարզային (համայնքային) ենթակառուցվածքների գնահատում, դրանց կարգաբերում ու զարգացում,

- մարզերի զարգացման ծրագրերի կազմման ու իրականացման հայեցակարգի հիման վրա յուրաքանչյուր մարզի համար մշակել և հաստատել մարզային զարգացման ծրագիր, ինչը հնարավորություն կտա արտացոլել յուրաքանչյուր մարզին բնորոշ հիմնախնդիրներն ու զարգացման առանձնահատկությունները, կնպաստի տարածքային զարգացման պլանավորման կատարելագործմանը և հնարավորություն կտա տարբեր մարզերի զարգացման ծրագրերը դարձնել համադրելի,

**2.** Տեղական ինքնակառավարման համակարգի տարածքային, տնտեսական, ֆինանսական և քաղաքական դերի բարձրացման նպատակով.

- հստակորեն սահմանագատել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, մշակել համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի համագործակցության գործունակ մեխանիզմների ներդրումն ապահովող օրենսդրական նախագծեր և ապահովել դրանց տեղայնացումը ՀՀ համայնքներում,

- Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման առանձնահատկությունների հստակեցման և սահմանման միջոցով իրականացնել Երևանը որպես մեկ համայնք կայացմանն ուղղված գործուն աշխատանքներ,

- շարունակել աշխատանքները միջհամայնքային միավորումների ստեղծմանն աջակցելու ուղղությամբ, մշակել և իրագործել դրանց ստեղծման ու գործունեության օժանդակության ծրագրեր: Մշակել ՀՀ համայնքների խոշորացման հայեցակարգից բխող օրենքներ և այլ իրավական ակտեր, ինչպես նաև մի շարք մարզերի համար հետագա գործողությունների ծրագրեր,

- ՏԻՄ-երի մի շարք պարտադիր և պետության կողմից պատվիրակված լիազորությունների համար մշակել դրանց իրականացման, համայնքներին ֆինանսական միջոցների տրամադրման կարգեր, սահմանել նորմատիվներ ու շափորշիչներ, ինչը հնարավորություն կտա բարձրացման

տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների մատչելիությունն ու որակը,

- համայնքների բյուջեներին պետական ֆինանսական օժանդակության համակարգի արդյունավետության բարձրացման և տարբեր ֆինանսական կարողություններ ունեցող համայնքների միջև առկա բնեուացման մեղմացման նպատակով ներդնել ֆինանսական համահարթեցման նոր համակարգ,

- համայնքներում իրականացնել ծրագրային բյուջետավորման ներդրման, ինչպես նաև Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում Եվրոպական երկրների և միջազգային կազմակերպությունների ու քանկային կառույցների հետ համագործակցության միջոցով համայնքներում դրամաշնորհային ու վարկային ծրագրերի ներգրավման ապահովման աշխատանքներ,

- իրականացնել աշխատանքներ համայնքային բյուջեների եկամտային մասն ապահովող հարկատեսակների հավաքագրման մեխանիզմների կատարելագործման և տեղական նոր հարկատեսակների ներմուծման ուղղությամբ,

- համայնքների համար ստեղծել տեղեկատվական միասնական բանկ, բոլոր համայնքների տեղեկատվական կենտրոնացված շտեմարան (ՏԿՆ-ում) և տեղադրված էլեկտրոնային կառավարման համակարգերի անխափան շահագործումն ապահովող սպասարկման ծառայություններ, ինչը հնարավորություն կտա բարձրացնել մարզերի և համայնքների կառավարման համակարգի արդյունավետությունը: Ներդնել նաև համայնքային կառավարման տեղեկատվական համակարգեր հանրապետության շուրջ 200 համայնքներում, իրականացնել տեղեկատվական համակարգերն օգտագործող աշխատակիցների ուսուցում և վերապատրաստում,

- ավարտել համայնքային ծառայողների առաջին վերապատրաստման աշխատանքները, իրականացնել համայնքային ծառայության համակարգի ներդրման արդյունավետության բարձրացմանն ուղղված ուսումնասիրություններ և համայնքներում կադրային գործի վարման նկատմամբ հսկողություն, ապահովել ատեսավորումների ու մրցույթների անխափան ընթացքն ու թափանցիկությունը:

### **Գյուղատնտեսության ոլորտ**

Հայաստանի Հանրապետության ազգարային հատվածում կառավարության կողմից վարվող քաղաքականությունը 2009 թվականին կնպատակառուղղվի գյուղատնտեսության և նրան սպասարկող կառույցների, գյուղմթերքների իրացման ու վերամշակման ոլորտների գործունեության արդյունավետության բարձրացմանը և դրա հիման վրա պայմաններ կստեղծվի ազրոպարենային ոլորտի հետագա զարգացման ու ընդլայնված վերարտադրության կազմակերպման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտների ավելացման, գյուղատնտեսությունում տնտեսվարողների համար բարենպատ պայմանների ստեղծման, հիմնական պարենամթերքների ինքնարավության և պարենային անվտանգության մակարդակի բարձրացման համար: ՀՀ գյուղատնտեսության նախարարության քաղաքականության

կարևորագույն ուղղություններից է հանրապետության անտառային տնտեսության պահպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում պետական ծրագրերի իրականացումը:

ՀՀ կառավարության 2008-2012թթ ծրագրով ազրարային ոլորտը դիտարկվում է որպես պետության ծախսային քաղաքականության գերակայություններից մեկը և գյուղատնտեսության հարկային արտոնությունների տրամադրումից անցում է կատարվում բազմակողմանի աջակցության գործիքների կիրառմանը:

Նախատեսվում է 2009 թվականին խորացնել ազրարային հատվածի բարեփոխումները, որոնք ուղղված կլինեն հետևյալ խնդիրների լուծմանը.

-պետության և տնտեսավարող սուբյեկտների միջև իրավահարաբերությունների ներդաշնակեցում և այդ նպատակով համապատասխան իրավական դաշտի ձևավորում,

-տեղական արտադրողների շահերի պաշտպանության քաղաքականության իրականացման միջոցով տնտեսվարող սուբյեկտների համար նպաստավոր տնտեսական պայմանների ստեղծում և մրցունակության բարձրացում,

-գյուղատնտեսության սպասարկման և արտադրական ենթակառուցվածքների զարգացման ծրագրերի իրականացում,

-գիտակրթական, տեղեկատվական ու խորհրդատվական համակարգի կարողությունների ուժեղացում, համակարգի բարելավման մեխանիզմների ներդրում,

-ազրարային արտադրական գործընթացներում նոր մեթոդների և տեխնալոգիաների ներդրման աջակցություն:

Նշված քաղաքականության կենսագործման նպատակով ՀՀ 2009 թվականի պետական բյուջեով նախատեսվող ծախսերը կնպատակառուղղվեն գերակայություն ունեցող հետևյալ ներդրումային ծրագրերի իրականացմանը.

-բնական կերահանդակների բարելավում և ջրարբիացում,

-հակահեղեղային միջոցառումների իրականացման միջոցով հողերի բարելավում,

-հողերի ագրոքիմիական հետազոտություններ և բերրիության բարձրացման միջոցառումներ,

-սերմնաբուժական և տոհմա-սելեկցիոն աշխատանքների բարելավում, տոհմային գործի կազմակերպում, արհեստական սերմնավորման միջոցառումներ,

-մարզային անասնաբուժական լաբորատորիաների և կրթական կազմակերպությունների կարողությունների ուժեղացում,

-բույսերի կարանտինի, պաշտպանության և գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումներ,

-ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին և ազրարային կանոններին համապատասխան ֆիտոսանիտարական, սննդամբերքի անվտանգության և անասնաբուժական ոլորտում տեսչական վերահսկողության ապահովում,

-անտառային տնտեսության պահպանման, պաշտպանության, անտառների վերականգնման և կառավարման համալիր միջոցառումների իրականացում,

- գիտակրթական, տեղեկատվական և խորհրդատվական ոլորտի ամրապնդում և զարգացում,
- գյուղատնտեսության համար ոչ բարենպաստ պայմաններում գործող տնտեսվարողներին պետական աջակցության (սուբսիդավորման) տարբեր մեխանիզմների ներդրում,
- ագրարային ոլորտի տնտեսվարողներին շուկայահանման գործընթացում աջակցություն,
- գյուղացիական տնտեսություններին և գյուղատնտեսությունում տնտեսավարող սուբյեկտներին տնտեսական գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծում, գյուղատնտեսական ենթակառուցվածքների զարգացման ծրագրերի իրականացում:

Ազրոպարենային համակարգի զարգացման 2009 թվականի քաղաքականության մեջ, որպես գլխավոր նպատակ, կմնա երկրի պարենային ապահովության մակարդակի բարձրացումը: Դրա հետ մեկտեղ, հետևողական աշխատանքներ կիրականացվեն գյուղատնտեսության վարկավորման բնագավառում առկա խոշնորտների վերացման, մասնավորապես, առավել անբարենպաստ պայմաններում տնտեսվարող սուբյեկտների վարկային տոկոսադրույթի սուբսիդավորման, օրենսդրական հիմքերի բարելավման և նպատակային ծրագրերի համաֆինանսավորման միջոցով ազրարային ոլորտում տարբեր տնտեսվարման ձևերի զարգացման ուղղությամբ, ինչը նպաստավոր պայմաններ կստեղծի գյուղատնտեսական տեխնիկայի և արտադրության այլ միջոցների արդյունավետ օգտագործման, գյուղատնտեսական մթերքների իրացման, մասնավոր հատվածի նախաձեռնողական կարողությունների ավելացման բնագավառում ծագած հիմնախնդիրների լուծման և տնտեսվարողների գործունեության արդյունավետության բարձրացման համար:

### **Էներգետիկայի բնագավառ**

Էներգետիկայի բնագավառում իրականացվող պետական քաղաքականությունը նպատակառողվելու է Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության մակարդակի շարունակական բարձրացմանը, էներգահամակարգի ֆիզիկապես ու բարոյապես մաշված էներգատեղակայանքների սերնդափոխությանը՝ անվտանգության, էներգամատակարարման հուսալիության և շրջակա միջավայրի պաշտպանության ապահովման պահանջների կատարմամբ:

Էներգետիկայի բնագավառի գործունեությունն ուղղված է լինելու էներգահամակարգի զարգացման խթանմանը, այդ թվում՝ միջուկային էներգետիկ հզորությունների ստեղծմամբ, սեփական վերականգնվող էներգապաշարների առաջնահերթ իրացմամբ, արտահանման կողմնորոշում ունեցող կայուն ու հուսալի էներգահամակարգի կառուցմամբ, տարածաշրջանային էներգահամակարգի հետ ինտեգրմամբ:

Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի հատկացումների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից տրամադրվող վարկային միջոցների հաշվին կշարունակվեն «Ելեկտրահաղորդման և բաշխիչ համակարգեր» և «Երևանի համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի նախագիծ» ծրագրերը (Միջազգային համագործակցության Շապոնական բանկ), Որոտանի ՀԷԿ-երի համակարգի վերազինման, Գյումրի-2 ենթակայանի վերականգնման, Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման օդային գծի կառուցման ծրագրերը (Գերմանիայի Դաշնային Հանրապետության Վերականգնման վարկերի բանկ (KfW):

Մեփական միջոցների, ԱՄՆ-ի էներգետիկայի դեպարտամենտի և Եվրահամայնքի կողմից հատկացվող միջոցների հաշվին կշարունակվի Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի անվտանգության աստիճանի բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացումը:

2009 թվականին նախատեսվում են հանրապետության վառելիքամատակարարման ուղիների գանազանեցման, տարածաշրջանային ինտեգրացման և սեփական էներգառեսուրսների առաջնահերթ օգտագործման հետևյալ ծրագրային միջոցառումները.

-Իրան-Հայաստան գազամուղի Քաջարան-Սիսիան և Զերմուկ-Արարատ հատվածների կառուցման ավարտ,

-մասնավոր կապիտալի ներգրավմամբ՝ ՀԷԿ-երի և հողմաէլեկտրակայանների կառուցման աշխատանքների իրականացում,

-Արաքս գետի վրա Մեղրի ՀԷԿ-ի կառուցման նախապատրաստական աշխատանքների կազմակերպում,

-Իրանի և Հայաստանի էներգահամակարգերի միջև էլեկտրաէներգիայի փոխանակման ընդլայնման նպատակով երրորդ օդային գծի կառուցման աշխատանքների իրականացում:

ՀՀ կառավարության և Ռուսաստանի Դաշնության «ԳԱԶՊՐՈՄ» ընկերության միջև կնքված համաձայնագրով՝ 2009 թվականին կշարունակվեն Հրազդանի ԶԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի շինարարության աշխատանքները:

Կշարունակվեն էներգետիկայի բնագավառի տեխնիկական կանոնակարգերի, ազգային ստանդարտների մշակման աշխատանքները՝ Եվրամիության համապատասխան ստանդարտներին ու նորմերին դրանց աստիճանական մոտարկման կիրառմամբ:

Իրենց աշխատանքները կշարունակեն «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի» Հիմնադրամը, ինչպես նաև Գերմանիայի կառավարության գարգացման վարկերի բանկի կողմից ֆինանսավորվող «Փոքր ՀԷԿ-երի արդիականացման հիմնադրամ» Ծրագիրը:

2009 թվականին ջերմամատակարարման բնագավառում իրականացվող աշխատանքների արդյունքում իրենց լուծումը կստանան ջերմամատակարարման ծառայությունների առևտրայնացման ինստիտուցիոնալ, իրավական և կարգավորիչ դաշտի գարգացման, ջերմամատակարարման վերականգնման տեխնիկապես և տնտեսապես հիմնավորված ու մատչելի սխեմաների վերջնական ընտրության հետ կապված խնդիրները։ Այս աշխատանքների հաջող ընթացքին կնպաստեն Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի Հիմնադրամի գործունեությունը, ինչպես նաև դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող համապատասխան Ծրագրերը։

Հանրապետության գազամատակարարման համակարգի վերականգնման ու գարգացման ուղղությամբ ավարտվելու են հանրապետության բնակչության գազամատակարարման վերականգնման և նոր գազաֆիկացման աշխատանքները՝ պահպանվելու է ՀՀ պետական բյուջեի միջոցներից սահմանային բնակավայրերի գազաֆիկացման աշխատանքներին տրամադրվող ֆինանսական օգնությունը։

**Ընդերքի բնական պաշարների բնագավառում** 2009 թվականին իրականացվող պետական բաղաքանությունը նպատակառությունը է հետևյալ հիմնախնդիրների լուծմանը.

-ընդերքի տնտեսական ներուժի շարունակական բացահայտմանը,

-ընդերքօգտագործման ոլորտի ռազմավարության մշակմանը և օրենսդրական դաշտի կատարելագործմանը,

-ընդերքի պաշարների վերարտադրության, ողջամիտ, արդյունավետ և համալիր օգտագործման ապահովմանն ուղղված միջոցառումների մշակմանը,

-ընդերքի պաշարների արդյունահանման պետական երկրաբանական հսկողության իրականացմանն ուղղված տնտեսական ու իրավական մեխանիզմների մշակմանն ու կիրառմանը,

-հանրապետական երկրաբանական ֆոնդի, ընդերքի պաշարների մասին տվյալների կադաստրների՝ միջազգային չափանիշներին համապատասխան ձևավորմանն ու վարմանը, տեղեկությունների թափանցիկության ապահովմանը,

-հաստատված օգտակար հանածոների պաշարներով հանքավայրերի տարեկան հաշվեկշիռների կազմմանը,

-օգտակար հանածոների հայտնաբերման նպատակով երկրաբանական համալիր ուսումնասիրությունների իրականացման կազմակերպմանը,

-հետախուզված ընդերքի պաշարների տնտեսական գնահատման և հաստատման ապահովմանը:

### **Զրային տնտեսություն**

Զրային տնտեսության բնագավառում կարևորվում է անցած տարիների ընթացքում կատարված բարեփոխումների շարունակման գործընթացի ապահովումը, ինչպես նաև ոլորտի գարգացման բաղաքանությունից բխող նոր հիմնախնդիրների լուծումները:

2009 թվականի ընթացքում խմելու և ոռոգման ջրերի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման աշխատանքների բարելավման գերակա ուղղություններ կլինեն համակարգերում մասնավոր կառավարման ձևերի ամրապնդումը, կատարելագործումը, ներդրումների անհրաժեշտ ծավալների ներգրավումը, զրային համակարգերի վերականգնմանն ու զարգացմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացումը, համակարգերի օգտագործման տնտեսական արդյունավետության և հուսալիության բարձրացումը, մատուցված ծառայությունների դիմաց վարձավճարների հավաքագրման մակարդակի բարձրացման և ջրի կորուստների նվազեցման նպատակով հաշվառման համակարգի կազմակերպման համալիր ծրագրերի ներդրումը, ինչպես նաև ընկերությունների ինքնածախսածածկման ապահովման շարունակումը:

Հասանելի և որակյալ ծառայությունների մատուցման ապահովման նպատակով 2009 թվականի ընթացքում անհրաժեշտ է շարունակել ներդրումներ կատարել զրային ոլորտում: Ներդրումային բաղաքանությունը պետք է նպատակառությամբ լինի համակարգերի ֆիզիկական կառուցվածքների պահպանմանը և վերականգնմանը, ծառայությունների մատուցման էներգատար կառուցվածքների փոփոխմանը, համակարգերում հաշվառելիության համակարգի բարելավմանը և արդիականացմանը:

**Հայաստանի Հանրապետության ջրային տնտեսության ոլորտում նախատեսվում է իրականացնել հետևյալ հիմնական աշխատանքները.**

-կազմակերպել մասնավոր կառավարման պայմանագրերով նախատեսված աշխատանքների իրականացման և վերահսկման գործընթացները,

-ապահովել Երևան քաղաքի շարունակական ջրամատակարարման ծրագրի իրականացումը և նպաստել «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր-Ակունք» ՓԲԸ-ների կողմից սպասարկվող տարածքներում ևս նմանատիպ գործընթացների աստիճանական ակտիվացմանը և ջրամատակարարման տևողության ավելացմանը,

-Համաշխարհային բանկի, Եվրոպական վերականգնման և զարգացման բանկի (EBRD), ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, ֆրանսիական կառավարության, Ասիական բանկի և այլ դրույթների հետ իրականացնել ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ներդրումնային ծրագրերը,

-ապահովել ՀՀ կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև ֆինանսական համագործակցության շրջանակներում KfW բանկի կողմից ֆինանսավորվող «Լոռու (Վանաձոր) և Շիրակի (Գյումրի) մարզերում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավում» ներդրումային ծրագրի իրականացումը,

-«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի համար միջազգային խորհրդատուի աջակցությամբ ուսումնասիրել մասնավոր կառավարման հետագա ձևերը և դրանց կիրառման հնարավորությունները,

-Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր-Ակունք» ՓԲԸ-ների համար ներդնել մասնավոր կառավարման մեխանիզմներ,

-ապահովել և վերահսկել համակարգի կազմակերպությունների արդյունավետ գործունեությունը,

-խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև ոռոգման մասով նպաստել գյուղական ենթակառուցվածքների զարգացմանը,

-ուսումնասիրություններ իրականացնել և շարունակել համապատասխան դրույթում կազմակերպությունների հետ աշխատանքները մաքրման կայանների վերականգնման և գործարկման ուղղություններով,

-իրականացնել ոռոգման հատվածում ֆինանսական և կառուցվածքային բարեփոխումներ,

-տարրեր դրույթ կազմակերպությունների հետ շարունակել բանակցություններ վարել համակարգի ջրամատակարար ընկերությունների կողմից չսպասարկվող և ծրագրերում շրնդարկված գյուղական համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման և ինստիտուցիոնալ բարեփոխումների նպատակով ներդրումներ և աջակցություն իրականացնելու վերաբերյալ,

-աշխատանքներ իրականացնել՝ Համաշխարհային բանկի ֆինանսավորման շրջանակներում ոռոգման համակարգի ներդրումային նոր ծրագրի իրականացման ուղղությամբ,

-աջակցել Հազարամյակի մարտահրավերներ ծրագրի իրականացմանը,

-նպաստել ջրօգտագործողների ընկերությունների հետագա զարգացմանը, ինչպես նաև ջրօգտագործողների ընկերությունների միությունների ստեղծմանը,

-նպաստել «Սևան-Հրազդանյան-ջրառ», «Ախուրյան-Արաքս-ջրառ» և «Դեբետ-Աղստև-ջրառ» ՓԲԸ-ների գործունեության արդյունավետության բարձրացմանը,

-ապահովել Արփա-Սևան քունելի անխափան և անվտանգ շահագործման ու նրա տեխնիկական վիճակի բարելավման համար Աբով Դարիի վարկային ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացումը,

-ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ ջրամատակարար կազմակերպությունների մասով նպաստել շրջանառու (ոիվոլվինգ) ֆոնդի գաղափարի ուսումնասիրմանն ու ներդրմանը,

-շարունակել կատարելագործել հաշվառման համակարգը,

-խրախուսել ջրի և էլեկտրաէներգիայի խնայողությունը,

-շարունակել բարելավել օրենսդրական դաշտը և նորմատիվային բազան,

-գործուն մեխանիզմներ ստեղծել մատուցած ծառայությունների դիմաց վճարումների գանձման համար, այդ թվում՝ շարունակելով օգտագործել դատական ակտերի հարկադր կատարման ծառայության ուժերը,

-միջոցառումներ ձեռնարկել տարիներով կուտակված պարտքերի մարման ուղղությամբ,

-իրականացնել վերահսկողություն ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում ապօրինությունների կանխարգելման ուղղությամբ:

Ընդհանուր առմամբ նախատեսվում է ապահովել խմելու և ոռոգման ջրի համակարգերի բարեփոխումների երկարաժամկետ ծրագրերի իրականացումը՝ հիմնականում նպատակ դնելով բարձրացնել դրանց շահագործման հուսալիությունը և արդյունավետությունը, բարձրացնել համակարգի կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը (այդ թվում՝ մասնավոր կառավարման միջոցով), ինչպես նաև կրծատել ջրի կորուստները և բարելավել ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների որակը: Միաժամանակ անհրաժեշտ է շարունակել կարևորագույն հիդրոտեխնիկական կառուցվածքների, այդ թվում՝ ջրամբարների պատվարների ամրապնդման ու նորոգման աշխատանքները, որը կապահովի դրանց անվտանգ ու անխափան շահագործումը:

2009 թվականի ընթացքում նույնպես անհրաժեշտ է շարունակել խմելու և ոռոգման համակարգերը շահագործող ընկերությունների սուբսիդավորման քաղաքականությունը: Այն պայմանավորված է նաև վերջնական սպառողների համար սուբսիդավորման հասցեագրված քաղաքականության չհստակեցման հետ: Այդ առումով անհրաժեշտ է գործնական մեխանիզմներ ստեղծել վերջնական սպառողին հասցեագրված սուբսիդավորման քաղաքականության կիրառման ուղղությամբ: Ոռոգման ոլորտում անհրաժեշտ է կիրառել սուբսիդավորման ծախսային մեթոդից՝ ըստ արդյունքների դրամաշնորհների տեսքով ԶՕԸ-ներին ֆինանսական աջակցության պրակտիկային անցում կատարելու մեխանիզմները:

Անհրաժեշտ է ոռոգման ջուր մատակարարող ընկերությունների մասով մինչև 2012 թվականը շարունակել դրամարկղային ռեժիմով հարկման մեխանիզմները՝ կատարելով համապատասխան օրենսդրական փոփոխություններ:

Ընդհանուր առմամբ նախատեսվում է ապահովել խմելու և ոռոգման ջրի համակարգերի բարեփոխումների երկարաժամկետ ծրագրերի իրականացումը՝ հիմնականում նպատակ դնելով բարձրացնել դրանց շահագործման հուսալիությունը և արդյունավետությունը, ինչպես նաև կրճատել ջրի կորուստները և բարելավել ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների որակը: Միաժամանակ անհրաժեշտ է շարունակել կարևորագույն հիդրոտեխնիկական կառուցվածքների, այդ թվում ջրամբարների պատվարների ամրապնդման ու նորոգման աշխատանքները, որոնք կապահովեն դրանց անվտանգ ու անխափան շահագործումը:

### **Տրանսպորտ**

**Տրանսպորտի բնագավառում** 2009 թվականին ծրագրավորված տնտեսական քաղաքականության հիմնական նպատակը շարունակում է մնալ փոխադրումների իրականացման ապահովում՝ գոյություն ունեցող ճանապարհների (երկարուղային, ավտոմոբիլային) ամբողջական ու արդյունավետ օգտագործմամբ: Այդ նպատակին են ծառայելու 2009 թվականի պետական բյուջեում ընդգրկված պետական նշանակության ավտոճանապարհների և տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծրագրերը, որոնք կազմվել են Հայաստանի Հանրապետության Նախագահի հանձնարարականներով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով և պարտավորություններով:

«Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» ծրագրով 2009 թվականին նախատեսվում է իրականացնել գարնանային հեղեղումներից քանդված ճանապարհահատվածների վերականգնման աշխատանքներ:

«Ավտոճանապարհների պահպանում և շահագործում» ծրագրով ՀՀ 2009 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին կիրականացվեն 5742.0 կմ միջանական, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պահպանման և շահագործման աշխատանքներ:

Ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ փոսային նորոգումների և ձմեռային պահպանության, ինչպես նաև մի շարք կամուրջների և բունելների պահպանության աշխատանքների իրականացումը տրանսպորտային միջոցների երթևեկությունը կդարձնի առավել դյուրին, անվտանգ և նվազ ծախսատար:

«Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում» ծրագրով նախատեսվում է իրականացնել 1962.0 կմ մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանության, ինչպես նաև ճանապարհների ընթացիկ նորոգման աշխատանքները:

«Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» ծրագրով 2009 թվականին նախատեսվում է իրականացնել վթարավտանգ տեխնիկական վիճակում գտնվող կամրջային կառուցվածքների և վթարավտանց 10 կամուրջների հիմնանորոգման աշխատանքներ:

### **Ավիացիա**

«Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» իրականացումն ապահովող միջոցառումների հետ կապված՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից Համաշխարհային Բանկի հետ ակտիվորեն տարկում են քննարկումներ օդային փոխադրումների քաղաքականության տարբեր հարցերի շուրջ և շարունակվում են մշակվել քաղաքականություններ և սկզբունքներ՝ Հայաստանի Հանրապետության ավիափոխադրողների շուկայում ներկա և ապագա ավիափոխադրողների կողմից անվտանգ ծառայությունների մատուցման ուղղությամբ:

Փոքր ավիացիայի զարգացման համար՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից մշակվում է «փոքր ավիացիա» ստեղծելու վերաբերյալ հայեցակարգ, որի հիմքում կդրվեն այն չափորոշիչները և ուղղությունները որոնցով կընդանա փոքր ավիացիայի կայացումն ու զարգացումը:

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության 2009թ. գործունեության հիմնական ուղղություններն են.

-Ծովիչքների անվտանգության ապահովման կանոնակարգումը և դրա նկատմամբ վերահսկողությունը,

-Ավիացիոն անվտանգության ապահովման կանոնակարգումը և դրա նկատմամբ վերահսկողությունը,

-Օդանավերի թոփքային պիտանիության գնահատումը,

-Օդային երթևեկության կազմակերպման ապահովման կանոնակարգումը,

-Օդանավակայանների սերտիֆիկացումը և օդանավակայանների վերգետնյա սպասարկման տեխնիկական միջոցների շահագործման նկատմամբ վերահսկողությունը,

-Օդերևութաբանական, աերոնավիգացիոն տեղեկատվական, տեխնիկական և այլ վերգետնյա ծառայություններ մատուցող մարմինների նշանակումն ու դրանց գործունեության վերահսկումը,

-ՀՀ տարածքում պատահարների և միջադեպերի մասնագիտական քննությունը, այլ պետությունում՝ ՀՀ գրանցված կամ ՀՀ շահագործողի կողմից շահագործվող օդանավի հետ կապված նման քննության մասնակցությունը, ապահովության հարցերում առկա միտումների վերլուծությունը և ավիացիոն գործունեություն իրականացնողներին հետագա վրարների կանխարգելման նպատակով համապատասխան տեղեկատվության մատուցումը, ՀՀ տարածք թոփքներ իրականացնող այլ պետությունների օդանավերի տեսչական ստուգումների անցկացումը,

-Հայաստանի Հանրապետության ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի ներդրումը և վարումը,

-Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական ավիացիայի բնագավառում որոնողական-փրկարարական աշխատանքների համակարգումը,

-Ավիացիոն մասնագետների վկայագրումը և որակավորումը,

-Օդային փոխադրումների կարգավորումը և լիցենզավորումը:

**Կապի բնագավառում** անխափան ուղիոկապի, հեռախոսային կապի, ինչպես նաև հեռուստառադիոհեռարձակման ապահովված նպատակով 2009թ.նախատեսվում է իրականացնել ուղիութերի մոնիթորինգի, ՀՀ տարծքում հաճախականությունների տեխնիկական հսկողության, ուղիութեական միջոցների և բարձր հաճախության սարքավորումների տեղորշման, տեխնիկական զննման, փորձաքննության և հատկացված հաճախականությունների պլանային չափումների անցկացման, կապի շինարարական աշխատանքների տեխնիկական նորմերին համապատասխանության ընդունման, եթերի խանգարման աղբյուրների հայտնաբերման և վերացման աշխատանքներ:

### **Քաղաքաշինություն**

Քաղաքաշինությունը յուրաքանչյուր պետության համար հանդիսանում է ուղղմավարական նշանակություն ունեցող ոլորտներից մեկը, որի զարգացմամբ էապես պայմանավորված է պետության կայուն զարգացման հիմնահարցերի լուծումը:

Շինարարության ոլորտում 2009 թվականի ընթացքում կարևորվում է կրթական և մշակութային օբյեկտների կառուցման, հիմնանորոգման և վերակառուցման աշխատանքների շարունակական բնույթի ապահովումը, ինչը կնպաստի կրթական համալիրի վերազինմանը, ուսուցման մակարդակի էական բարձրացմանը, մշակութային կյանքի զարգացմանը, բնակչության համար ժամանցի վայրերի ստեղծմանը և անհրաժեշտ ծառայությունների մատուցման մակարդակի բարձրացմանը:

Կիրականացվեն նաև առողջապահական և մարզական օբյեկտների կառուցման և հիմնանորոգման աշխատանքներ, որոնք կնպաստեն բնակչության առողջ ապրելակերպին :

Ոլորտում իրագործվող ծախսային ծրագրերը ունեն ուղղմավարական նշանակություն, որոնց հեռանկարային արդյունքները նպատակառուղիված են լինելու հատկապես ՀՀ մարզերում բնակչության զբաղվածության մակարդակի և ընդհանուր կենսամակարդակի բարձրացմանը, կրթության, մշակույթի և առողջապահության ոլորտներում վարվող միասնական քաղաքականության ապահովմանը, տարածական՝ արդի պահանջներին բավարարող միջավայրի ստեղծմանը, նոր քաղաքացու ձևավորմանը:

Ոլորտի որակական նոր չափանիշների ձեռք բերման համար, կարևորվում են շինարարական ծրագրերի իրագործմանը նախորդող նախագծանախաշվային փաստաթղթերի մշակման ընթացքն ու նախահաշվային արժեքների ձևավորման սկզբունքները՝ մասնավորապես, հեռանկարում ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 23-ի «Գնագոյացման նորմերի և նորմատիվների կիրառումն ապահովելու մասին» թիվ 1484-Ն որոշմամբ սահմանված արդի նորմատիվ փաստաթղթերի պարտադիր կիրառման ապահովումը ՀՀ տարածքում՝ տնտեսվարող բոլոր սուբյեկտների կողմից:

2009 թվականի լնիքացրում նախատեսվում է շարունակել նաև քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի (շինարարական նորմերի, ձեռնարկների, ստանդարտների, կանոնների և այլ փաստաթղթերի) մշակման աշխատանքները: Հանրապետությունում տեխնիկական կանոնակարգերի քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի բազան համալրելու նպատակով փաստաթղթերի մշակման աշխատանքները տարվելու են ինչպես հանրապետական, այնպես էլ՝ միջազգային մակարդակով ԱՊՀ երկրների հետ համագործակցության համաձայնագրի շրջանակներում:

2009 թվականին բնակարանային ոլորտում նախատեսվում են աշխատանքներ իրականացնելու ուղղված պետական աջակցության նպատակային ծրագրերի շրջանակներում 1998-1992թ. Աղբեջանից բունագաղթած փախստական և աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան լնտանիքների բնակարանային խնդիրների լուծմանը, որը նախատեսվում է իրականացնել պետական անհատույց ֆինանսական աջակցության տրամադրման միջոցով շուկայից բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու, ինչպես նաև աղետի գոտում անհատական բնակարանային շինարարության և բնակելի շենքերի ամրացման և նորոգման միջոցով:

### **Արտակարգ իրավիճակներ**

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 2009 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական նպատակներն են՝

1. քաղաքացիական պաշտպանության համակարգի զարգացում հետևյալ ուղղություններով՝

-քաղաքացիական պաշտպանության կազմակերպման իրավական դաշտի կատարելագործում և համապատասխանեցում միջազգային պահանջներին,

-կապի և ազդարարման համակարգի վերականգնում՝ ժամանակակից տեխնիկական լուծումներով,

-ՀՀ նախարարությունների և մարզերի պահեստային կառավարման կետերի ստեղծում՝ համապատասխան տեխնիկական հագեցմամբ,

-ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայողների մասնագիտական և հատուկ պատրաստականության բարձրացում,

-բնակչության ուսուցում,

-դեկավար մարմինների նախապատրաստման ժամանակակից մեթոդների ներդնում,

-իրավիճակների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվության հավաքման, մշակման, վերլուծության և առաջարկությունների նախապատրաստման համակարգի կատարելագործում,

-քաղաքացիական պաշտպանության համակարգի նյութատեխնիկական բազայի ապահովում:

2. տարերային աղետներից և տեխնածին վթարներից բնակչության պաշտպանության ապահովում՝

-արտակարգ իրավիճակների կանխարգելման, կանխման և հետևանքների վերացման միասնական քաղաքականության իրականացում,

-արտակարգ իրավիճակներ ծնող պատճառների բացահայտման, դրանց կանխման ու կանխարգելմանն ուղղված գործունեության նկատմամբ պետական վերահսկողական գործառույթների ուժեղացում, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից տեսչական գործունեության իրականացման ինստիտուցիոնալ հնարավորությունների մեծացում,

-արագ արձագանքման փրկարար ուժերի պատրաստականության բարձրացում և տեխնիկական հագեցվածության ապահովում,

-մքնոլորտային երևոյթների վրա ակտիվ ներգործության ծառայության զարգացում և ժամանակակից մեթոդների ներդնում,

-հանրային իրազեկման համակարգի կատարելագործում և զարգացում,

-գիտատեխնիկական նվաճումների և նորագույն մոտեցումների ներդնում արտակարգ իրավիճակների կառավարման բնագավառում:

### **Արտաքին քաղաքականություն**

ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական նպատակներն են.

-Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովումը, տարածաշրջանում կայունության և ժողովրդավարության հաստատումը, պետությունների միջև իրավահավասար և գործընկերային փոխհարաբերությունների ձևավորումը, Լեռնային Ղարաբաղ խնդրի խաղաղ և արդարացի կարգավորումը, հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը,

-Երկրի հարածուն զարգացումը, տնտեսական առաջնաբացը, ազգաբնակչության կենսամակարդակի բարելավումը, ժողովրդավարական բարեփոխումների անցկացումը, մարդու իրավունքների և ազատությունների պահպանման համար բարենպաստ արտաքին պայմանների ձևավորումը:

ՀՀ արտաքին քաղաքականության ոլորտի հիմնական խնդիրներն են.

1. ընդհանուր քաղաքականության ոլորտում՝

-ակտիվ ներգրավվածությունը միջազգային կարևորագույն կազմակերպություններում,

-մասնակցությունը համաշխարհային նշանակության գործընթացներին, մասնավորապես ահարեկչության և կազմակերպված հանցագործության այլ ձևերի դեմ պայքարին,

-Ռուսաստանի հետ հատուկ ռազմավարական գործընկերության խորացումը,

-ԱՄՆ-ի հետ բարեկամական գործընկերության և համագործակցության զարգացումը,

-Եվրոպական, հետխորհրդային կառույցներում Հայաստանի մասնակցությունը և ակտիվացումը,

-Տարածաշրջանային կարևոր դերակատարների՝ Չինաստանի, Հնդկաստանի, Շապոնիայի, Բրազիլիայի հետ հարաբերությունների զարգացումը: Մասնավորապես, նախատեսվում է Տոկիոյում ՀՀ դեսպանության հիմնում:

2. տարածաշրջանային քաղաքականության ոլորտում՝

-անմիջական հարևանների՝ Իրանի հետ փոխհարաբերությունների հետագա զարգացումն ու ամրապնդումը,

- Վրաստանի հետ ավանդական բարի դրացիական հարաբերությունների խթանումը,
- Ծուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը,
- Լեռնային Ղարաբաղի խնդրի խաղաղ և արդարացի կարգավորումը,
- տարածաշրջանային կայունության ամրապնդումը և համագործակցության ծավալումը:

Տնտեսական գործոնի ակտիվացմամբ Հայաստանի տնտեսական անվտանգության, տնտեսական առաջընթացի համար բարենպաստ արտաքին պայմանների ապահովման, տնտեսական զարգացման աճի վերջին տարիների բարձր տեմպերի պահպանման առաջնահերթ հիմնախնդիրներն են արտաքին աշխարհին կապող տրանսպորտային, էներգակիրների տեղափոխման երրուղիների անխափան գործարկումը, դրանց տարբերազատումը (դիվերսիֆիկացումը), արտաքին առևտրի համար նպաստավոր պայմանների ապահովումը, հայրենական արտադրանքի արտահանման նոր շուկաների որոնումը և նվաճումը, արտաքին ներդրումների ապահովումը:

Եվրոպական ինտեգրացման գործընթացներին Հայաստանը միացել է՝ անդամակցելով Եվրոպայի խորհրդին և Եվրոպական Միության հետ կնքելով Գործընկերության ու համագործակցության պայմանագիր: Հայաստանը շարունակում է հետևողականորեն իրականացնել ժողովրդավարական ինստիտուտների և քաղաքացիական հասարակության կայացմանը, եվրոպական չափանիշներին դրանց համապատասխանեցմանն ուղղված բարեփոխումներ, պետությունների Եվրոպական ընտանիքին լիարժեքորեն անդամակցելու ծրագրեր: Այս ամենին նոր երանգ է հաղորդելու Հայաստանի ակտիվ մասնակցությունն ու գործունեությունը ԵՄ «Նոր հարևանության» ծրագրի շրջանակներում:

Անվտանգության բաղադրիչների ամրապնդումը ենթադրում է Հայաստանի ակտիվ գործունեություն բոլոր ձևաչափերով, գործնական ներգրավում ունենալով առաջին հերթին ՀՍՊԿ և Հայաստան-Ռուսաստան ռազմավարական հարթությունում, ապա ՆԱՏՕ ԱԳՁԾ, ԵԱՀԿ բազմակողմ և Հայաստան-ԱՄՆ, Հայաստան-Հունաստան և այլ երկկողմ ուղղություններով:

Հարավային Կովկասում տեղի ունեցած վերջին զարգացումները և դրան հաջորդած միջազգային արձագանքներն առաջ են բերել նոր իրավիճակ ոչ միայն մեր տարածաշրջանում, այլև իրենց ազդեցությունն են բողել մեզ առնչվող միջազգային հարաբերությունների ողջ համալիրի վրա: Նշված իրողությունները նոր խնդիրներ են դնում ՀՀ արտաքին քաղաքականության առջև երկկողմ և բազմակողմ հարաբերությունների հարթություններում համարժեք և անհրաժեշտ քայլերի և դիրքորոշումների մշակման և իրականացման առումներով: Առավել նշանակություն են ձեռք բերում աշխատաքննությունները մասնավորապես, միջազգային կազմակերպություններում, քարոզական և տեղեկատվական ոլորտներում:

Առանձնահատուկ նշանակություն ունի Եվրոպական առանձին երկների հետ համագործակցության ակտիվացումը, որոնցից շատերի հետ արդեն իսկ ունենք բարձր մակարդակի հարաբերություններ:

Մեծապես կարևորվում է նաև Հայաստանի համագործակցությունն այնպիսի գործընկերների հետ, ինչպիսիք են Ղազախստանը, Բելոռուսը, Ռէկրաինան, Թուրքմենստանը և ԱՊՀ մյուս երկրները:

Հայաստանը շարունակելու է ուշադրություն դարձնել բարձր մակարդակով բազմակողմ և փոխահավետ համագործակցության պահպանման ու զարգացմանը Մերձավոր Արևելքի, Լատինական Ամերիկայի տարածաշրջանի, Աֆրիկյան մայրամարքի երկրների հետ:

### **Կրթություն**

Կրթության ոլորտը, լինելով երկրի կայուն զարգացման, ինչպես նաև մարդկային կապիտալի պահպանման ու վերարտադրության նախապայմաններից մեկը, դիտվում է որպես երկրի զարգացման առաջնային գերակայություններից մեկը: Ներկայումս Հայաստանում հավասարապես մատչելի որակյալ կրթության ապահովման և կրթության ոլորտի արդյունավետության բարձրացման նպատակով՝ կրթական բոլոր մակարդակներում իրականացվում են բարեփոխումների ծրագրեր: Կրթության բնագավառի վիճակի բարելավումը դիտվում է որպես առաջնահերթ խնդիր նաև 2009 թվականին:

Վերջին տարիներին կառավարության կողմից կրթության ոլորտում իրականացված միջոցառումները հիմնականում ուղղված են հանրակրթության համակարգի կառավարման բարեփոխմանը, արդյունավետության բարձրացմանն ու որակի բարելավմանը: Բարելավվել է նաև հատկացվող պետական ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությունն՝ ի հաշիվ դպրոցների օպտիմալացման և աշխատուժի օգտագործման արդյունավետության:

Կրթության ոլորտի հիմնական գերակայություն է համարվում տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթությունը՝ ոլորտում մատուցվող ծառայությունների որակի և արդյունավետության բարձրացման տեսանկյունից:

Հանրակրթության ոլորտի հիմնական գերակայություն են շարունակում մնալ՝  
-կրթության բովանդակային բարեփոխումը, նորմատիվ դաշտի բարելավումը,  
-աշխատավարձերի բարձրացումը,  
-մանկավարժական կադրերի վերապատրաստումների իրականացումը, մերոդական սպասարկումը,

-վերապատրաստումների իրականացումը մարզերում,  
-12-ամյա կրթության և հանրակրթությունից մասնագիտական կրթության անցումն ապահովող նորմատիվային փաստաթղթերի և այլ նյութերի մշակումն ու ներդրումը,

-առանձին գործող ավագ դպրոցների համակարգի ներդրումը,  
-զնահատման նոր համակարգի ներդրումը,  
-քննությունների բեստերի մշակումը և միասնական քննությունների անցկացումը :

2009 թվականին նախատեսվող կրթության ոլորտի ծախսերի աճի հիմնական մասը կուղղվի հանրակրթության ոլորտին, որը հնարավորություն կտա ապահովել նշված ոլորտում ՀՀ կառավարության ստանձնած պարտավորությունների իրականացումը:

Մասնավորապես նախատեսվում է՝

-2009 թվականին բարձրացնել ուսուցիչների, վարչական անձնակազմի, ուսումնաօժանդակ և տնտեսական անձնակազմի միջին ամսական աշխատավարձերը,

-ապահովել տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերի վարձավճարը,

-ապահովել դպրոցներն ուսումնական գույքով,

-ապահովել հասուն դպրոցներին անվճար ծրագրերով, դասագրքերով, ձեռնարկներով և ուսումնական այլ նյութերով:

Հանրակրթության ոլորտում արդյունավետության բարձրացման ուղղությամբ նախատեսվում են իրականացնել հետևյալ միջոցառումները՝

-կրթական չափորոշիչների փոփոխություն, ուսուցման նոր մեթոդների ներդրում, ուսումնական նոր նյութերի արամադրում:

2009 թվականին հանրապետության շուրջ 944 դպրոցներ ընդգրկված կլինիկ ինտերնետային ցանցում :

Նախատեսվել է լրացուցիչ միջոցներ ուղղել դպրոցների ընթացիկ ծախսերի համար, այդ թվում վառելիքի ու ջեռուցման ծախսերի գծով:

Հանրակրթության ոլորտում շարունակում է գերակայություն համարվել հանրակրթության անբաժանելի մաս կազմող հասուն կրթության համակարգը, որի բարեփոխումների ռազմավարությունը կառուցվում է հետևյալ ելակետային դրույթների հիմքի վրա.

-ներառական դպրոցների ցանցի զարգացում,

-հասուն հաստատությունների ընդունելության համակարգի բարեփոխում,

-հասուն հաստատություններում երեխաների կրթության և խնամքի որակի բարելավում:

Հասուն և շարունակական ուշադրություն է պահանջում սփյուռքի հայկական դպրոցները դասագրքերով ապահովման խնդիրը: Այն հանդիսանում է Հայաստան-սփյուռք քաղաքականության առանցքային ուղղություններից մեկը:

2009 թվականին Հայաստանում նախատեսվում է 100 սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստում և դրա իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների աճ:

Կշարունակվի յուրաքանչյուր տարի 70 սփյուռքահայ դիմորդների ընդունելությունը պետական բուհեր:

2009 թվականին նախատեսվում է տարբեր տեսակների արտադպրոցական կրթական հիմնարկների զարգացում, կրթության բովանդակության բարելավում, ըստ հետաքրքրությունների դպրոցականների պահանջարկի բավարարում, լրացուցիչ ծառայությունների ոլորտի ընդլայնում, տարարնույթ արտադպրոցական և մարզառազմական ծրագրերի և միջոցառումների իրականացում :

Լուծելով հիմնական ընդհանուր կրթության որակի բարձրացման խնդիրները, պետությունը բավարար հիմքեր է ստեղծում մասնագիտական կրթության ոլորտում ընդգրկվածության մակարդակների բարձրացման համար, հասուն ուշադրություն դարձնելով հավասարության խնդիրներին:

Նշված ոլորտում գերակայություն են դիտվում «Քարձրագույն և հետրուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի, Լիսաբոնի կոնվենցիայի պահանջների ապահովումը, Քոլոնիայի գործընթացին ՀՀ բարձրագույն կրթական համակարգի ինտեգրման գծով հիմնական ուղղությունների իրականացումը՝

-համընթեռնելի և համադրելի բարձրագույն կրթական փաստաթղթերի ներդրում,

-որակավորումների ազգային համակարգի ստեղծում,

-ՀՀ կրթական համակարգի վերաբերյալ տեղեկատվության պատրաստում և տրամադրում շահառուներին:

Կարևորելով մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) դերը՝ սահմանվել են համակարգի զարգացման հետևյալ գերակայությունները.

-կարողությունների վրա հիմնված մասնագիտական կրթության և ուսուցման չափորոշիչների մշակման, կիրառման և արդիականացման համար նորմատիվային դաշտի ստեղծում,

-մասնագիտական կրթության և ուսուցման իրականացման գնահատման և որակի մոնիթորինգի համար նորմատիվային դաշտի ստեղծում,

-օրենսդրական և ենթաօրենսդրական իրավական և նորմատիվային ակտերի մշակում՝ ոչ ֆորմալ կրթության արդյունքների ճանաչման համար,

-«Մեծահասակների կրթության մասին» ՀՀ օրենքի ընդունում և կիրարկում:

Հետրուհական գիտակրթական ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության 15 պետական բուհերում և 2009 թվականին կպատրաստվեն շուրջ 1084 գիտական կադրեր արտադրությունից կտրված և ոչ կտրված հիմունքներով:

### **Գիտության ոլորտ**

2009 թվականին Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի ռազմավարական նախակոմիտեն ու խնդիրներըն են լինելու՝

-հանրապետության գիտական և գիտատեխնիկական ներուժի զարգացումը, դրա ռացիոնալ տեղաբաշխումը և պահպանումը, գիտական և գիտատեխնիկական կադրերի պատրաստման արդյունավետ համակարգի ձևավորումը, հասարակության մտավոր ներուժի վերարտադրումը,

-գիտության ոլորտի զարգացման ու բնականոն գործունեության ապահովում՝ որպես տնտեսության զարգացման, երկրի անվտանգության ապահովման, կրթության, մշակույթի և հասարակական առաջընթացի բացառիկ կարևոր գործոն,

-գիտական և գիտատեխնիկական քաղաքականության մշակումը և իրականացումը,

-ինովացիոն քաղաքականության մշակման ու իրականացման գործընթացին մասնակցումը, Հայաստանի Հանրապետությունում հիմնարար ու կիրառական գիտության և գիտատեխնիկական արդյունքի ու բարձր տեխնոլոգիաների ներդրմանն աջակցումը:

Գիտության ոլորտում բարեփոխումների հիմնական նպատակն է գիտելիքի վրա հիմնված տնտեսության և հասարակության ստեղծումը, որում վճռորոշ դերակատարություն պետք է ունենա պետությունը:

Դրա համար առաջնահերթ անհրաժեշտ է.

-ձևավորել գիտության ոլորտի պետական կառավարման արդյունավետ համակարգ,

-ավելացնել գիտության ֆինանսավորման ծավալները, բարձրացնել ֆինանսավորման արդյունավետությունը,

-իրականացնել գիտության ոլորտում համապատասխան ինստիտուցիոնալ բարեփոխումները,

-բարձրացնել գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը,

-արդիականացնել գիտության ոլորտի ենթակառուցվածքը, նյութատեխնիկական բազան,

-ստեղծել գիտական ոլորտի գիտական փորձաքննության անկախ համակարգ,

-հստակեցնել գիտության և տեխնոլոգիաների գերակա ուղղությունները,

-ապահովել գիտության և կրթության ինտեգրումը,

-ապահովել գիտական ներուժի վերարտադրությունը և երիտասարդացումը, ավելացնել ասպիրանտների կրթաթոշակը,

-նպաստել գիտական արդյունքի ապրանքայնացմանն ու դուրսերմանը ներքին և արտաքին շուկա:

### **Առողջապահություն**

Առողջապահության ոլորտի գործունեության բարելավման և զարգացման քաղաքականության հիմքում դրված է բնակչության առողջության պահպանման և բարելավման հստակորեն սահմանված և միջազգայնորեն ընդունված հետևյալ հիմնարար արժեքները՝ բուժօգնության տրամադրման հավասարություն, արդարություն, մատչելիություն, բժշկական օգնության որակի ապահովում, առողջության պահպանման գործում կառավարության և անհատների նոր դերի սահմանում, այդ գործընթացում պատասխանատվության տարանջատում, ստվերային գործունեության վերացում, ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործում և լրացուցիչ միջոցների ընդգրկում:

Ոլորտում իրականացվող բարեփոխումներն ուղղված են լինելու համակարգի կազմակերպական ու կառուցվածքային վերափոխումներին, օրենսդրական դաշտի բարելավմանը, առողջապահության ֆինանսավորման համակարգի կատարելագործմանը, արտաքին ու ներքին կապիտալի ներփակում առողջապահության ոլորտ, բժշկական օգնության կազմակերպման կատարելագործմանը, ոլորտի օպտիմալացմանը և արդիականացմանը:

Առողջապահության ոլորտի զարգացման դիմանմիկ քաղաքականության ապահովման նպատակով կարևորագույն հիմնախնդիր է դիտվում բնագավառի օրենսդրական դաշտի բարելավումը: Այդ նպատակով առաջնային է դիտարկվում ոլորտի գործունեությունը հիմնականում կանոնակարգող «Առողջապահության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը:

Բուժօգնության համակարգի զարգացումը շարունակաբար ուղղված է լինելու նրա մատչելիության, որակի բարելավման, կառավարելիության, կազմակերպման արդյունավետության և

Ֆինանսավորման կատարելագործմանը, մասնավորապես, բնակչությանը մատուցվող բժշկական օգնության փոխհատուցման բազմաձևության (պետական պատվեր, համավճար, բժշկական ապահովողություն, վճարովի ծառայություններ և այլն) իրականացմամբ, բուժօգնության ստանդարտների աստիճանական ներդրմանը, որակի բարելավմանը և վերահսկմանը, բուժօգնության տարբեր օղակների միջև փոխկապակցվածության աստիճանի բարձրացմանը:

Ներդրվում է ընտանեկան բժշկության համակարգը, որն աստիճանաբար կփոխարինի գույություն ունեցող ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության համակարգին: Առաջիկա տարիներին ևս կշարունակվի առաջնային բուժօգնության համակարգի դերի և նշանակության բարձրացմանն ուղղված ռազմավարության իրականացումը:

Բնակչության անապահով խավի համար պետական նպատակային ծրագրերի հասցեականության բարձրացման և աղքատության հարցահարման համատեքատում որպես գերակա ուղղություն է դիտվում առողջապահական ծառայությունների մատչելիության բարձրացումը՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով բուժօգնության առաջնային օղակի վրա: Բնակչության սոցիալապես առավել խոցելի խավերի համար բուժօգնության մատչելիությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ապահովել հասարակության բոլոր ինստիտուտների մասնակցությունը և համակարգված գործողությունները:

Հատուկ ուշադրություն է դարձվելու մարզային և գյուղական մակարդակում բուժօգնության առաջնային պահպանման ոլորտի դերի ամրապնդմանն ու գործունեության բարելավմանը, ինչպես նաև գյուղական ազգաբնակչության առողջության առաջնային պահպանմանը, բժշկական ծառայությունների մատչելիության և դրանց որակի բարձրացման ապահովմանը: Այդ նպատակին ուղղված առաջին քայլերից է գյուղական ամբուլատորիաների վերանորոգումն ու ժամանակակից սարքավորումներով վերազինումը:

Անհրաժեշտ է վերահսատատել կանաց և երեխաների առողջության հարցերի գերակայությունն ազգային մակարդակով՝ ապահովելով նրանց առողջության և սնուցման բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի շարունակական իրազործումը, այդ թվում՝ կրծքով սնուցման խրախուսումը, հηիների նախածննդյան խնամքի և շուրջնանդյան որակյալ բուժօգնության տրամադրումը:

Երեխաների բուժօգնության հարցում հատուկ ուշադրություն է դարձվելու որակի բարելավման և հիվանդությունների կանխարգելման միջոցառումներին՝ ներառյալ պատվաստումների և երեխայի առողջ աճի ու զարգացման ծրագրերի իրականացումը:

Հարունակական գործնքացի համատեքատում առողջապահության բյուջեի սոցիալական ուղղվածության բնորոշումը կապահովի երկրում աղքատության աստիճանը որոշող հատուկ համակարգի ներդրմամբ պայմանավորված բուժօգնության հասցեագրված ֆինանսավորման իրականացումը:

Դեղային և տեխնոլոգիական քաղաքականության հիմնական ուղղվածությունը լինելու է դրանց մատչելիության, անվտանգության և կիրառման արդյունավետության բարձրացումը, ինչպես

նաև ավելի արդիական ու արդյունավետ դեղերով ապահովումը: Սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդություններով (սուրբերկուլյոզ, հոգեկան խաճագարումներ, դիաբետ, չարորակ նորագոյացություններ և այլն) տառապող հիվանդների դեղորայքով անխափան և շարունակական ապահովման համար նախատեսված է համապատասխան դեղամիջոցների ձեռքբերում, կենտրոնացված միջոցների հաշվին, որոնք կարիքավորներին կտրամադրվեն պոլիկլինիկաների (դիսպանսերների պոլիկլինիկական բաժանմունքների) միջոցով և նրանց հսկողության ներքո:

Բուժկազմակերպությունների բժշկական սարքավորումների վերագինման, բուժենխնիկայով հագեցվածության, բուժական և ախտորոշման գործընթացի բարձրացման նպատակով նախատեսվում է բժշկական ժամանակակից սարքավորումների ձեռքբերում (կենտրոնացված միջոցներով), որոնք հավասարաշափ կրաշխվեն մարզերում՝ թե ամբողատոր-պոլիկլինիկական օլակի, թե հիվանդանոցային համակարգի բոլոր բուժհաստատությունների միջև:

Բժշկական կրթության, գիտության և կաղուային բնագավառում տարվող քաղաքականության հիմնական նպատակներն են լինելու կաղուային ներուժի օպտիմալացումը, բժշկական մասնագիտական կաղըերով հանրապետության ողջ տարածքում համաշափ հագեցվածության ապահովումը, բժշկական կրթության կառուցվածքի և ստանդարտների մոտեցումը միջազգային չափանիշներին, բժշկագիտության ներուժի արդյունավետ կիրառման համար պայմանների ստեղծումը:

### **Սոցիալական պաշտպանության ոլորտ**

Սոցիալական պաշտպանության ոլորտում պետական քաղաքականությունը 2009 թվականին միտված կլինի բնակչության սոցիալապես խոցելի խմբերի առավել արդյունավետ պաշտպանությանը, նյութական աղքատության (հատկապես՝ ծայրահեղ աղքատության) և եկամտային անհավասարության կրծատմանը: Ուշադրության կենտրոնում կլինին հաշմանդամների, տարեցների, կանաց ու երեխաների հիմնահարցերը, ինչպես նաև բնակչության զբաղվածության մակարդակի բարձրացման, արժանապատիվ աշխատանքի դիմաց համարժեք վարձատրության, աշխատանքով պայմանավորված եկամուտների ավելացման, սոցիալական իրավունքի լիարժեք իրացման պայմանների ստեղծման, սոցիալական աջակցության հասցեականության, կենսարոշակների ու պետական նպաստների շարունակական աճի ապահովման խնդիրները: Քայլեր կձեռնարկվեն սոցիալական պաշտպանության ծրագրերի միջոցով ժողովրդագրական իրավիճակի բարելավման ուղղությամբ: Կշարունակվի համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ՝ նպատակ ունենալով սոցիալական պաշտպանության համակարգը առավել համահունչ դարձնել եվրոպանույցների հիմնարար սկզբունքների վրա խարսխված չափորոշիչներին:

**Զքաղվածության բնագավառում** նախատեսվում է աշխատանքներ իրականացնել ուղղված բնակչության լրիվ և արդյունավետ զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծմանը, մասնավորապես՝ սոցիալապես խոցելի խմբերի զբաղվածության ապահովման միջոցով նրանց սոցիալական պաշտպանության խնդիրների լուծմանը, աշխատաշուկայում լարվածության

մեղմացմանը: Կմշակվի բնակչության զբաղվածության ռազմավարությունը՝ հաշվի առնելով միջազգային փորձը և Հայաստանի Հանրապետության աշխատաշուկայի առանձնահատկությունները:

**Աշխատանքային իրավահարաբերությունների և աշխատավարձի քաղաքականության բնագավառի** առաջնահերթ օրենսդրական կարգավորման ենթակա հիմնախնդիրների (այդ թվում՝ հանրային ծառայողների վարձատրության համակարգում) լուծման նպատակով 2009 թվականին կշարունակվի աշխատանքի և աշխատավարձի ռազմավարության մշակումը:

**Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի բնագավառում կշարունակվի՝**

-առանց ծնողական խնամքի մնացած երեխաների շուրջօրյա խնամքը մանկատներում, ապահովելով նրանց դաստիարակության, ուսման, մտավոր և ֆիզիկական զարգացման համար նպաստավոր պայմաններ,

-երեխաների գիշերօրիկ խնամքի և պաշտպանության 7 հաստատությունների ծրագիրը, որի շրջանակներում կապահովվի 6-18 տարեկան 750 սոցիալապես անապահով երեխաների դաստիարակության, ուսման, մտավոր և ֆիզիկական զարգացման համար նպաստավոր պայմաններ,

-«Պետական աջակցություն մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագիրը, որի շրջանակներում շրջանավարտների համար կիրականացվի մասնագիտական կողմնորոշում և ուսուցում, սոցիալական պաշտպանություն և հասարակությանը նրանց ինտեգրում,

-«Պետական աջակցություն երեխաների սոցիալական հոգածության կենտրոններին» ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Երևանի Աջափնյակ համայնքի և Գյումրու երեխաների խնամքը ցերեկային կենտրոններում,

-«մանկատների բեռնաթափման և սոցիալական որբության կրճատման փորձնական ծրագիրը» Լոռու մարզում, որի նախատակն է ապահովել երեխաների վերադարձը հարազատ միջավայր և վերականգնել նրանց կապերն իրենց ընտանիքների ու համայնքների հետ,

-«Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի հին մասնաշենքի վերակառուցման ծախսեր և «Գյումրու «Երեխաների տուն»» ՊՈԱԿ-ի նոր մասնաշենքի կառուցման ծախսեր ծրագրերը,

-«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարանների տրամադրում» ծրագիրը,

-«Պետական աջակցություն «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության երեխաների խնամքի շորս ցերեկային կենտրոններին» ծրագիրը,

-«Հայատանի Հանրապետությունում խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման հետ կապված ծախսեր» ծրագիրը:

**Հաշմանդանների և տարեցների հիմնահարցերի բնագավառում կշարունակվեն հաշմանդանների սոցիալական վիճակի բարելավմանը, հասարակությանը նրանց ինտեգրմանը, հավասար (մատչելի) պայմանների ապահովմանը, բժշկական, սոցիալական և հոգեբանական վերականգնմանն ուղղված աշխատանքները:**

Կշարունակվի հաշմանդամների պրոթեզավորման, պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովման գործընթացը, լսողության խնդիրներ ունեցող երիտասարդ հաշմանդամներին եվրոպական արտադրության լսողական սարքերով ապահովումը, հաշմանդամների աչքի պրոթեզավորումը և ձայնաստեղծ սարքերով ապահովումը:

Տեսողության խնդիրներ ունեցող հաշմանդամների համար ձեռք կրերվեն հատուկ տառատեսակներով գրքեր, տետրեր, կճայնագրվեն «Խոսող գրքեր»:

Կիրականացվի նաև «Պետական աջակցություն տեսողությունից հաշմանդամ անձանց «Արև» համակարգով ուսուցանելու և համակարգչային տեխնիկայով ապահովելու համար» ծրագիրը:

Կշարունակվեն հաշմանդամների բժշկացիալական և հոգեկան առողջության վերականգնման աշխատանքները «Արթմեդ» բուժվերականգնողական և «Սքրես» կենտրոններում, կցուցարերվի պետական աջակցություն «Փրկություն» հասարակական կազմակերպության հաշմանդամ երիտասարդների սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոնին:

Կիրականացվեն հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունների տրամադրման աշխատանքներ Վարդենիսի տուն-ինտերնատին կից ցերեկային կենտրոնում:

Կշարունակվեն միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման աշխատանքները: Պետության լրիվ խնամքի ներքո գտնվող միայնակ ծերերն ու հաշմանդամները կխնամվեն տուն-ինտերնատներում:

2009 թվականին ևս կշարունակվի տարեցներին և հաշմանդամներին համայնքահեն ծառայությունների մատուցումը՝ «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի միջոցով:

Զգալիորեն կրարձրացվեն Հայրենական մեծ պատերազմի վետերաններին, ինչպես նաև զինհաշմանդամներին և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին որոշ արտոնությունների դիմաց տրամադրվող դրամական օգնությունների չափերը:

Կշարունակվեն աշխատանքներն անօթևան մարդկանց ժամանակավոր կացարանով ապահովման ուղղությամբ, կսպասարկվեն 60 անօթևան քաղաքացի:

Կշարունակվի նաև բռնադրատվածներին և նրանց ժառանգներին բնակարանային շինարարության, տան վերանորոգման կամ բնակարան ձեռք բերելու համար արտոնյալ պայմաններով երկարաժամկետ վարկերի, ինչպես նաև օրենքով նախատեսված միանվագ դրամական փոխհատուցումների տրամադրման գործընթացը:

**Սոցիալական աջակցության բնագավառում** շարունակում է հրատապ մնալ սոցիալական աջակցության տարրեր ուղղությունների, մասնավորապես ընտանեկան նպաստի հասցեականության բարձրացման հարցը: Շարունակվելու է այդ նպատակի համար նախատեսված ֆինանսական միջոցների ուղղումն առավել աղքատ և քաղմազավակ ընտանիքներին:

Երեխայի ծննդյան միանվագ նպաստի նպատակը դիտարկելով, ոչ միայն ընտանիքի որոշակի ծախսերի մասնակի հատուցում, այլ նաև ժողովրդագրական պատկերի բարելավում կամ ծնելիության խրախուսում, կրարձրացվի նպաստի չափը՝ 35 հազար դրամից 50.0 հազար դրամի և կտարբերակվի՝

Ելնելով ընտանիքում երեխայի ծննդյան հերթական թվից: Ընտանիքում գտնվող երրորդ և հաջորդող յուրաքանչյուր երեխայի ծննդյան և խնամքի նպաստի չափը կսահմանվի 430 հազար դրամ:

Երեխայի խնամքի նպաստի չափը բարձրացվելու է դիտարկելով այն, որպես չստացած աշխատավարձի դիմաց տրվող մասնակի փոխհատուցում՝ հավասարեցնելով տվյալ տարվա համար նվազագույն աշխատավարձի 60% - ին կամ 18 հազար դրամի:

**Սոցիալական ապահովագրության և կենսաբոշակային ապահովության բնագավառում քայլեր կձեռնարկվեն բազմաստիճան կենսաբոշակային համակարգի ներդրումը և բնականոն գործունեությունն ապահովող ենթակառուցվածքների ձևավորման և կատարելագործման ուղղությամբ:**

ՀՀ Ազգային ժողովի հավանությանն արժանացած ՀՀ կառավարության ծրագրի շրջանակներում կրարձրացվի կենսաբոշակների չափերը:

Ապահովագրական կենսաբոշակների միջին չափը կաճի շուրջ 17.5%-ով իսկ սոցիալական կենսաբոշակներինը՝ 15.8 %-ով:

Կրարձրանա նաև սպայական և շարքային գինծառայողների և նրանց ընտանիքների անդամներին վճարվող կենսաբոշակների միջին չափերը համապատասխանաբար 11.3 % և 13.2 %-ով:

Համապատասխան քայլեր կձեռնարկվեն նաև սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական բազաները կատարելագործելու, էլեկտրոնային տեղեկատվության հիման վրա շահառուներին սպասարկելու կառուցակարգեր սահմանելու, տեղեկատվության ինքնաշխատ փոխանակությունն ապահովող համակարգչային ծրագրեր, մեխանիզմներ մշակելու և ներդնելու ուղղությամբ:

### **Բնակչության միզրացիայի և փախատականների ոլորտ**

Միզրացիոն գործընթացների պետական կարգավորման ոլորտում 2009 թվականին իրականացման ենթակա առաջնահերթ միջոցառումներ կիսանդիմանան՝

- 2007 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1598-Ն որոշմամբ հաստատված թրաֆֆիքինգի դեմ պայքարի 2007-2009թթ. Ազգային ծրագրով և դրա իրականացման ժամանակացույցով սահմանված միջոցառումներն իրագործելու ուղղությամբ աշխատանքների իրականացումը,

- օտարերկրյա պետություններում գտնվող ՀՀ քաղաքացիների և սփյուռքահայերի կողմից էլեկտրոնային կապի հաղորդուղիներով ՀՀ պետական կառավարման համապատասխան մարմինների հետ անմիջականորեն կապվելու համակարգի մշակումը և ներդրումը,

- օտարերկրյա պետություններում գտնվող ՀՀ քաղաքացիների Հայաստան վերադարձի խթանումը,

- Հայաստան օտարերկրյա քաղաքացիների մուտքի, նրանց կացության կարգավիճակների և աշխատանքային գործունեության կանոնակարգումը,

- օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց մարդասիրական նկատառումներով Հայաստանի Հանրապետության կողմից տրամադրվող պաշտպանության համակարգի կատարելագործման նպատակով ՀՀ-ում ապաստանի տրամադրման համակարգի միջազգային չափանիշներին համապատասխանեցումը,

- փախստականների քնակարանային հիմնախնդրի լուծման նպատակով՝ առավել կարիքավոր փախստականներին քնակարանով ապահովման ծրագրի մշակումը և ներդրումը:

**Արխիվային փաստաթղթերի մշտական պահպանության և անընդհատ համալրման նպատակով 2009 թվականին իրականացման ենթակա առաջնահերթ միջոցառումներ կիանդիսանան՝**

- արխիվային փախստաթղթերի երկարաժամկետ պահպանության ապահովման նպատակով «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ում արխիվապահության օլակարգավորման և օդառական համակարգերի ներդրումը,

- այլ պետությունների հետ համագործակցության, նրանց տարածքում գտնվող հայկական պատմական, հոգևոր ու մշակութային արժեքների պահպանության նպատակով՝ ԱՊՀ և միջազգային այլ երկրների հետ արխիվագիտական կապերի ամրապնդումը, իրականացնել արխիվագիտության բնագավառում արդիական փորձի փոխանակումը:

### **Մշակույթի ոլորտ**

2009 թվականին մշակույթի ոլորտի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղություններն են՝

-մշակութային ժառանգության պահպանությունը,

-արվեստի և մշակութային ժամանակակից ենթակառույցների զարգացումը և մշակութային գործընթացների խթանումը,

-տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը մշակույթի ոլորտում,

-մշակույթի ոլորտի կայության քաղաքականությունը և մշակութային կրթությունը,

-մշակույթի համաշափ զարգացումը,

-միջազգային համագործակցության զարգացումը,

-տեղեկատվական քաղաքականության իրականացումը:

Ոլորտի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղություններին համապատասխան պետական բյուջեով նախատեսված հատկացումներն ուղղվելու են նաև ՀՀ տարածքում քնակվող ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնության պահպանման ու զարգացմանը, Հայաստանի մշակութային դաշտին ներգրավմանը:

ՀՀ մշակույթի ոլորտում 2009 թվականի պետական բյուջեի հատկացումները կուղղվեն ծառայությունների, մշակութային միջոցառումների և ներդրումների իրականացմանը:

**Գրադարանների ոլորտում** հատկացումները հիմնականում ուղղված են լինելու գրադարանային աշխատողների աշխատանքի վարձատրությանը, գրադարանային հավաքածուների, ազգային մատենագիտության տվյալների էլեկտրոնային շտեմարանի պահպանության ու համալրմանը, տեղեկատվական-գրադարանային ավտոմատացված համակարգերի գործածությանը, տպագիր նյութերի ազգային անձեռնմխելի ֆոնդերի, ազգային մատենագիտության, հրատարակությունների վերաբերյալ վիճակագրական տվյալների կազմմանն ու հրապարակմանը, հայկական տառատեսակների պահպանությանն ու նոր տառատեսակների մշակմանը:

Գրադարանների համար 2009 թվականին նախատեսված միջոցներն ուղղվելու են 16 գրադարանների և ՀՀ ազգային գրապալատի սուբյեկտուրմանը հատկացմանը և նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը:

**Թանգարանների ոլորտում** հատկացումները հիմնականում ուղղված են լինելու թանգարանային աշխատողների աշխատանքի վարձատրությանը, թանգարանային հավաքածուների համալրմանը, ամբողջացմանը, հետագա պահպանվածության ապահովմանը, հրապարակմանը, թանգարանային առարկաների կոնսերվացմանը և վերականգնմանը, թանգարանային նոր մշտական ցուցադրությունների, ցուցահանդեսների կազմակերպմանը, ցուցանմուշների կրկնատիպերի պատրաստմանը, վերականգնող մասնագետների վերապատրաստմանը, թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների էլեկտրոնային շտեմարանի ստեղծման աշխատանքների շարունակության իրականացմանը:

Թանգարանների համար նախատեսված միջոցները ուղղվելու են 39 թանգարանների սուբյեկտուրմանը և նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը:

2009 թվականին նախատեսված հատկացումների հաշվին իրականացվելու է Հայաստանի պատմության թանգարանում սենորային տեղեկատվական կրպակների (ուս թանգարանի ֆոնդապահոցներում կատեղծի վիրտուալ այցելության հնարավորություն), ինչպես նաև Հայաստանի ազգային պատկերասրահի վերելակների և շարժական-ցուցադրական պատերի ձեռքբերում:

**Մշակույթի տների, ակումբների, կենտրոնների** համար նախատեսված միջոցներն ուղղվելու են մշակույթի և ժամանցի կազմակերպմանը:

**Այլ մշակութային կազմակերպությունների** համար նախատեսված միջոցներն ուղղվելու են արխիվային, տեղեկատվական-վերլուծական և հանրային իրազեկման, մշակութային արժեքների փորձաքննության ծառայությունների իրականացմանը, ժողովրդական ստեղծագործության ավանդույթների և ժողարվեստի պահպանմանը, կենդանաբանական այգու ցուցադրությունների և ներդրումների իրականացմանը :

**Արվեստի** (թատերարվեստ, երաժշտարվեստ, պարարվեստ) համար 2009 թվականին նախատեսված միջոցներն ուղղվելու են թատերական ներկայացումների, երաժշտարվեստի և պարարվեստի համերգների, մշակութային միջոցառումների և ներդրումների իարկանացմանը :

-2009 թվականին արվեստի ոլորտում պետական բյուջեի միջոցներն առաջին հերթին կուղղվեն.

-թատերարվեստի, երաժշտարվեստի, պարարվեստի, կերպարվեստի, ժողովրդական արվեստի պահպանմանը, տարածմանը և զարգացմանը, նոր ստեղծագործական պատվերների, երաժշտական և դրամատիկ ստեղծագործությունների ձեռքբերմանը, ստեղծագործական աշխատողների աշխատանքի և գրադադության համապատասխան պայմանների ստեղծմանը,

-թատերական ու երաժշտական փառատոններին, կինոփառատոններին, մրցույթներին, ցուցահանդեսներին, մշակույթի, հասարակական-քաղաքական գործիչների և մշակութային նշանավոր իրադարձությունների հոբելյանների կազմակերպմանն ու անցկացմանը, մարզային

մշակութային և ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանմանն ուղղված միջոցառումներին,

-Հայաստանի Հանրապետության վավերացրած միջայետական համաձայնագրերին, մշակույթի պահպանման, տարածման և զարգացման ծրագրերին համապատասխան՝ սիյուռի հետ մշակութային հարաբերությունների զարգացմանը, արտերկրում հայ արվեստի ներկայացմանը:

Հատկացումների տրամադրումը նպատակ ունի ապահովել թատրոնների, համերգային կազմակերպությունների բնականոն գործունեությունը՝ որպես հայ մշակույթի ինքնատիպության, ազգային ինքնազիտակցության, լեզվի պահպանման և ամրապնդման միջոց:

**Կինեմատոգրաֆիայի ոլորտին** ուղղված հատկացումները նպատակ ունեն միջազգային չափորոշիչներին համապատասխան՝ ապահովել հայրենական կինոարտադրության, միջազգային կինոփառասուներին և կինոշուկաներին ՀՀ մասնակցության, մասնությունի և պատաճների համար հայկական կինոնկարների արտադրության և հասարակական-քաղաքական իրադարձությունների, կինոտարեգրության վավերագրման խթանմանը: Կինեմատոգրաֆիայի ոլորտի համար նախատեսված հատկացումներն ուղղված կլինեն կինոարտադրության կազմակերպմանը, կինոփոտո-ֆոնոն հավաքածուի պահպանմանն ու համալրմանը և ազգային կինոդրագրերի իրականացմանը :

«Կինոթատրոն անիվների վրա» ծրագրի իրականացման շնորհիվ հնարավոր կլինի կազմակերպել կինոդիտումներ հանրապետության մարզերում՝ ժամանակակից շարժական կինոցուցադրման տեխնիկայով:

**Պատմամշակութային անշարժ հուշարձանների պահպանության ոլորտի** համար նախատեսված հատկացումներն ուղղված կլինեն ՀՀ տարածքում պատմամշակութային անշարժ հուշարձանների ուսումնասիրմանը, հաշվառմանը, վավերագրմանը, վկայագրերի, պետական ցուցակների, պահպանական գոտիների վերականգնմանը և բարեկարգմանը, տարածքների նախագծերի կազմմանը, պատմամշակութային անշարժ ժառանգության գիտատեղեկատու շտեմարանի կազմմանը, հուշարձանների վերականգնման աշխատանքների և պեղումների իրականացմանը:

### **Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտ**

Ոլորտի ծրագրերի իրականացումը ենթադրում է հետևյալ խնդիրների լուծումը՝

- բնագավառի գործունեությունն ապահովող նոր իրավական ակտերի մշակում և ընդունում,
- ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հետագա զարգացման պետական քաղաքականության կատարելագործում՝ ՀԱՕԿ-ին, մարզաձևերի հանրապետական ֆեդերացիաներին, հաշմանդամային սպորտով զբաղվող հասարակական կազմակերպություններին, նախարարության ենթակայության և հասարակական մարզական կազմակերպությունների 48 մարզադպուցներին, Երևանի և Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջներին աջակցության ցուցաբերում,

- բնակչության առողջության ամրապնդում, ֆիզիկական դաստիարակության գիտականորեն հիմնավորված համակարգի կատարելագործում, անհատի բազմակողմանի և ներդաշնակ գարգացում, առողջ ապրելակերպի ձևափորում, ակտիվ հանգստի կազմակերպում,
  - ընտանիքների կենցաղում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ներդրում,
  - հանրապետության մարզերում ազգային մարզաձևերի վերականգնում,
  - հաշմանդամների տարրեր խմբերի համար ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համապատասխան պայմանների ստեղծում,
  - նախազորակոչային և զորակոչային տարիքի դպրոցականների կենցաղում առողջ ապրելակերպի արմատավորում, Հայրենիքի պաշտպանությանը պատրաստ և ՀՀ Զինված ուժերում ծառայելու համար ֆիզիկապես կոփված երիտասարդների դաստիարակում,
  - մանկապատանեկան սպորտի մասսայականության ապահովում,
  - միջազգային մարզական ասպարեզում հանրապետության վարկանիշի բարձրացման ապահովում,
  - մարզաձևերի հանրապետական առաջնությունների և ուսումնամարզական հավաքների կազմակերպում, մարզիկների վարպետության բարձրացում, աշխարհի, Եվրոպայի առաջնություններին, միջազգային մրցաշարերին հանրապետության մարզիկների նախապատրաստման և հաջող մասնակցության ապահովում,
  - հանրապետության հավաքական թիմերի անդամների բժշկական վերահսկողության և վերականգնողական միջոցների, բժշկակենսաբանական, հոգեբանական և այլ հետազոտությունների իրականացում, անհրաժեշտ մարզագույքով և հանդերձանքով ապահովում,
  - աշխարհի, Եվրոպայի և օլիմպիական խաղերի մրցանակակիրներին և նրանց մարզիչներին սահմանված կարգով դրամական պարզեցնելու հրականացում, նրանց նյութական և սոցիալ-տնտեսական պայմանների հետագա բարելավում,
  - պետական ծրագրերով, անկախ գերատեսչական պատկանելիությունից, մարզակառույցների վերանորոգման աշխատանքներին աջակցություն, գույքային ծրագրի շրջանակներում դրանք անհրաժեշտ մարզագույքով և սարքավորումներով ապահովում,
  - հանրապետական, մարզային և տարածաշրջանային սեմինար-խորհրդակցությունների և կլոր սեղանների կազմակերպում,
  - հանրապետության մարզչական կայությի, մարզադպրոցների տնօրենների վերապատրաստման և ատեստավորման գործընթացի իրականացում:
- Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում իրագործվող բարեփոխումները կնպատակառությունների մարզակառույցների արդյունավետ շահագործմանը, մարզական միջոցառումների մասնակիցների անվտանգության ապահովմանը:

#### **Երիտասարդական պետական քաղաքականության ոլորտ**

Երիտասարդական պետական քաղաքականության ոլորտի գերակայություններն են՝  
- խթանել հասարակական կյանքին երիտասարդների ակտիվ մասնակցությունը,

- մեծացնել երիտասարդների զբաղվածության հնարավորությունը,
- խթանել առողջ ապրելակերպը երիտասարդության շրջանում,
- բարձրացնել պետական երիտասարդական քաղաքականության իրականացման համակարգվածության մակարդակը և երիտասարդության շրջանում խթանել հոգևոր-մշակութային, հայրենասիրական դաստիարակությունը:

Երիտասարդական պետական քաղաքականության ոլորտի ծախսային ծրագիրը նախատեսում է իրականացնել՝

- երիտասարդական ոլորտի գործունեությունը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի մշակում և ընդունում,
- երիտասարդական կազմակերպությունների հետ համագործակցության զարգացում և նրանց գործունեությանն աջակցություն,
- երիտասարդության հոգևոր-մշակութային և գիտական մակարդակի բարձրացում, ազատ ժամանյի ակտիվ և նպատակային կազմակերպում,
- սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների ուսումնասիրում և դրանց լուծմանն ուղղված միջոցառումների իրականացում,
- երիտասարդության շրջանում հայրենասիրական դաստիարակության, քաղաքացիական գիտակցության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացում,
- մարզերի երիտասարդական պետական քաղաքականության զարգացում (մարզային երիտասարդական կենտրոնների գործունեության ապահովում և համայնքային երիտասարդական կենտրոնների ստեղծում, գյուղական և սահմանամերձ շրջանների երիտասարդության զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում),
- երիտասարդների լիակատար ինքնադրսնորման համար պայմանների ստեղծում, շնորհալի և տաղանդավոր երիտասարդներին աջակցություն,

- երիտասարդությանն անհրաժեշտ տեղեկատվության ապահովում,

- միջազգային և համահայկական երիտասարդական համագործակցության զարգացում:

Ոլորտի նպատակներն են՝ խթանել երիտասարդների մասնակցությունը որոշումներ կայացնելու գործընթացին (համայնքային, մարզային, հանրապետական մակարդակներում), զարգացնել երիտասարդների մարդկային և ինստիտուցիոնալ կարողությունները, նպաստել երիտասարդության շրջանում գործազրկության մակարդակի նվազեցմանը, ունենալ հոգեպես և ֆիզիկապես առողջ, կրթված և հայրենասեր երիտասարդություն:

### **Բնապահպանության ոլորտ**

Բնապահպանության ոլորտում 2009 թվականին կառավարության կարևորագույն և գերակա նպատակներն են լինելու՝

-երկրում բնապահպանական իրավիճակի համակարգված բարելավումը,

-հանրապետության շրջակա միջավայրի՝ մքնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական և բուսական աշխարհի, այդ թվում՝ բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վճասակար ներգործությունների նվազեցումը և կանխարգելումը,

-բնական պաշարների պահպանության, վերականգնման, վերարտադրության և արդյունավետ օգտագործման ապահովումը,

-ընդերքի պահպանության ապահովումը,

-շրջակա միջավայրի վիճակի դիտարկումների և ուսումնասիրությունների ապահովումը,

-շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելումը, վտանգավոր քիմիական ու ռադիոակտիվ նյութերի և թափոնների կառավարումը:

Վերջիններիս իրականացումն ապահովող աշխատանքները և միջոցառումները կիրականացվեն հետևյալ հիմնական ուղղություններով և ծրագրերով.

I. «Հնդերքի ուսումնասիրության և պահպանման ծառայություններ» ծրագրի շրջանակներում 2009 թվականին իրականացվելու է «Հիդրոերկրաբանական մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ին ցուցաբերվող պետական աջակցության շրջանակներում՝ ՀՀ տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիթորինգի վարման աշխատանքները:

II. «Քնական պաշարների կառավարման և պահպանման, բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման ծառայություններ» ծրագրի շրջանակներում 2009 թվականին իրականացվելու են ներքոհիշյալ միջոցառումները և ենթածրագրեր՝

1. Սևանա լճի համալիր ծրագրով նախատեսված համապատասխան միջոցառումների կատարումը, այդ թվում՝

-Զկան պաշարների համալրումը,

-Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառումը,

-Սևանա լճի ջրածածկ անտառունկարկների մաքրման աշխատանքները,

-Սևանա լճի շրջակայքի ջրածածկվող անտառային տարածքների գույքագրման և քարտեզագրման աշխատանքները:

2. 2009 թվականին բյուջետային հատկացումները նպատակառություններու են հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների («Սևան» և «Դիլիջան» ազգային պարկեր, «Խոսրովի անտառ» և «Շիկահող» պետարգելոցներ, «Սովհների պուրակ» պետական արգելավայր, դենդրոպարկեր և այլն) պահպանությանը, խնամքի և բնապահպանական այլ աշխատանքների և գիտական ուսումնասիրությունների իրականացմանը:

3. Ավարտվելու են ՀՀ կենդանիների և բույսերի Կարմիր գորի լրամշակման աշխատանքները:

4. Ակսվելու է Անտառի վնասատուների և հիվանդածին միջատների դեմ պայքարի Էկոլոգիական անվտանգ նոր տեխնոլոգիաների մշակման համալիր ծրագրի իրականացումը:

**5.** Ավարտվելու են Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման վարկային և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի անտառների գարգացման շվեդական դրամաշնորհային ծրագրերով նախատեսված աշխատանքները:

**III. Ծրջակա միջավայրի պահպանության, մոնիթորինգի և տեղեկատվական վերլուծական ծառայություններ ծրագրի շրջանակներում 2009 թվականին իրականացվելու են՝**

-հանրապետության ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիթորինգի և Բիո-էկոմոնիթորինգի աշխատանքները,

-վերոգրյալ մոնիթորինգային աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով շարունակվելու են ներդրումները «Ծրջակա միջավայրի վրա ներգրծության մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ում՝ հատուկ սարքավորումների ձեռքբերման նպատակով,

-Եվրոպական Տնտեսական Հանձնաժողովի «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին» կոնվենցիայի պահանջների կատարման նպատակով շրջակա միջավայրի վրա օդի հիմնական աղտոտիչների ազդեցության հետազոտում և մքնողրտ վնասակար նյութերի արտանետումների ներգրծությունը կարգավորող մեթոդական և իրավական ակտերի մշակման աշխատանքները,

-Բնապահպանական ոլորտի գծով վերլուծական-տեղեկատվական աշխատանքները,

-Օդի աղտոտվածության մոնիթորինգի դիտացանցի արդիականացման, մոնիթորինգային տվյալների ներկայացուցության ապահովման ծրագիրը,

**IV. Վտանգավոր թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարումն ապահովող պայմանների սահմանում ծրագրի շրջանակներում 2009 թվականին իրականացվելու են՝**

-թափոնների ուսումնասիրություն՝ թափոնների էկոլոգիապես անվտանգ ոչնչացման և վնասազերծման, ինչպես նաև սակավաբափոն և անթափոն տեխնոլոգիաների վերաբերյալ տեղեկատվության հավաքման, վերլուծության և տրամադրման, թափոնների գործածության ոլորտին վերաբերող նորմատիվամեթոդական փաստաթղթերի մշակման, վերլուծական և լուսաբանական աշխատանքների կատարման նպատակներով,

-«Օգտագործման համար ոչ պիտանի պեստիցիդների գործածությանը ներկայացվող կանոններ» և «Արտադրության և սպառման թափոնների տեղադրմանը և վնասազերծմանը ներկայացվող պահանջներ» նորմատիվ փաստաթղթերի մշակման աշխատանքները,

**V. Զրային ռեսուրսների կառավարման և պահպանման ծառայություններ ծրագրի շրջանակներում 2009 թվականին իրականացվելու են՝**

-Զրային պետական կադաստրի տեխնիկական իրականացման ծրագիրը,

-Սյունիքի, Վայոց Զորի, Լոռու մարզերի և Երևան քաղաքի ստորերկրյա քաղցրահամ

-«Հ զի ազգային ծրագրի մասին»ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումները,

### **Հարկային, մաքսային քաղաքականության և վարչարարության ոլորտ**

**Պետական եկամուտների (հարկային, մաքսային) վարչարարության ոլորտում նախատեսվում են իրականացնել հետևյալ միջոցառումները՝**

1. Կձեռնարկվեն միջոցներ տնտեսության մեջ հարկային գրանցումներին ամբողջական շղթայի վերականգնման ուղղությամբ՝ սկսած ապրանքների ներմուծումից մինչև դրանց վերջնական սպառումը:
2. Կշարունակվեն հարկային և մաքսային օրենսդրությունների ու ընթացակարգերի պարզեցման ուղղությամբ աշխատանքների իրականացումը՝ համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին: Բացի այդ կրարելավվեն տնտեսվարողներին հարկային և մաքսային օրենսդրությունների կիրառման մասին պարզաբանումների տրամադրման մեխանիզմները և ծավալները:
3. Շարունակվելու է արդիականացնել մաքսային հայտարարագրման, ինչպես նաև հարկային հաշվետվությունների մշակման և ծանուցումների ուղարկման ավտոմատ համակարգչային համակարգերը, որի նպատակով գործարկվելու են տվյալների մշակման և հարկ վճարողների սպասարկման արդիականացված մի քանի ռեգիստրացիա կենտրոններ:
4. Խոշոր տնտեսվարող սուբյեկտների կողմից հարկային և մաքսային պարտավորությունների ճիշտ և ժամանակին կատարումը, ինչպես նաև պետական եկամուտների հավաքագրման կայությունն ու համաշափությունն ապահովելու նպատակով կիրականացվեն աշխատանքներ, որոնք ի վերջո կհանգեցնեն նաև են եկամուտների աճի:
5. Կիրականացվեն լայնածավալ աշխատանքներ հարկային և մաքսային իրավախախտումների, մասնավորապես՝ հարկերի վճարումից խուսափելու, մաքսանենգության, ձևական (կեղծ) մաքսագերծման, առանց ապրանքների մատակարարման հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման դեպքերի բացահայտման և պատասխանատվության միջոցների լիարժեք ու հետևողական կիրառման ուղղությամբ: Օրենսդրական նոր հիմքի վրա հարկային մարմինները կիրառեն չափագրումների գործիքը հարկերը թաքցնող տնտեսվարողների իրական հարկային պարտավորությունները վերահաշվարկելու նպատակով, իսկ մաքսային մարմինների կողմից առավել խիստ պատասխանատվության կենթարկվեն մաքսանենգություն իրականացնողները:
6. Պետական եկամուտների ոլորտում նոր մշակույթի ձևավորման շրջանակներում կձեռնարկվեն քայլեր արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողների և ընդհանրապես բոլոր հարկ վճարող սուբյեկտների սպասարկման, իրազեկման և հարկերի վճարման ոլորտներում էական բարեփոխումների ապահովման ուղղությամբ:

2009 թվականին հարկային քաղաքականությունը հիմնականում ուղղված կլինի վերջին տարիներին կառավարության կողմից վարվող քաղաքականության միտումների գարգացմանը, մասնավորապես.

-հարկման այլնոտրանքային համակարգերից հարկման ընդհանուր համակարգին աստիճանական անցմանը, հարկային բեռի հավասարաշափ ու արդարացի բաշխմանը,

-պարզեցված հարկման կարգից հարկման ընդհանուր կարգին անցած հարկ վճարողների եւ առհասարակ, իրացման շրջանառության ոչ մեծ ծավալներ ունեցող տնտեսավարող սուբյեկտների (այդ թվում՝ գյուղատնտեսության ոլորտում գործող) ձեռնարկատիրական գործունեության համար նպաստավոր հարկային միջավայրի ձեւավորմանը, հարկային բեռի բերեացմանը, ինչպես նաև հարկման եւ հաշվառման ընթացակարգերի պարզեցմանը,

-հարկային պարտավորություններից ավելի վճարված գումարների՝ պետական բյուջեից վերադարձման մեխանիզմների կատարելագործմանը, նոր գերավճարների եւ ապառների առաջացման կանխարգելմանը,

-հարկ վճարողների կողմից հարկային պարտավորությունների ինքնազնահատման մեխանիզմների կատարելագործմանը,

-ֆիզիկական անձանց գույքի եւ եկամուտների հայտարարագրման առկա համակարգի հետագա զարգացմանը:

7. Եականորեն կնվազեցվեն տնտեսվարող սուբյեկտ-մաքսային ծառայող և տնտեսվարող սուբյեկտ-հարկային ծառայող շփումները, մասնավորապես.

-կընդլայնվի մաքսային մարմիններում ներդրված ինքնահայտարարագրման համակարգը՝ բոլոր մաքսային մարմիններում և դրանց կից տարածքներում ստեղծելով ինքնահայտարարագրման գրասենյակներ, ինչը կնպաստի մաքսային միջնորդի ինստիտուտի վերջնական կայացմանը,

-զգալիորեն կմեծանա ոչ առձեռն՝ փոստով (թղթային կամ էլեկտրոնային եղանակով) և հարկային տեսչություններում հաշվետվությունների ընդունման համար նախատեսված արկղերի միջոցով ներկայացվող հաշվետվությունների ծավալը,

-կակտիվացվեն փոխհարաբերություններն այլ երկրների հարկային և մաքսային մարմինների հետ՝ կնքելով համապատասխան միջազգային համաձայնագրեր, որոնք ել կապահովվեն ինչպես տեղեկատվության արդյունավետ փոխանակում, այնպես ել հսկողական աշխատանքների համար արժանահավատ տեղեկատվության ապահովում միջազգային գործընթացներում,

-կուտումնասիրվի միջազգային լավագույն փորձը և դրա հիման վրա վերջնականորեն կներդրվեն ոխսերի վրա հիմնված հարկային և մաքսային հսկողության համակարգերը, որն ել իր հերթին հնարավորություն կտա անհարկի չմիջամտել բարեխիղճ տնտեսվարողների գործունեությանը և ընդհակառակը՝ առավել խիստ վերաբերմունք դրսորել օրենտվության պահանջները խախտողների նկատմամբ: 2009 թվականից կիրականացվի ոխսային ոլորտների, կարևորագույն ապրանքատեսակների և առանձին տնտեսվարողների մշտական մոնիթորինգ: Արդյունքում կիրականացվի պետական եկամուտների հավաքագրման տեսանկյունից որոշիչ դերակատարում ունեցող տնտեսվարողների

նկատմամբ հասցեական վարչարարության կիրառումը՝ նախատեսելով հարկման բազաների իրական ծավալների ամբողջությամբ բացահայտում, վճարման ենթակա հարկային և մաքսային պարտավորությունների իրական չափերի հայտարարագրում և պետական բյուջե դրանք լիարժեք ծավալով և ժամանակին վճարում:

8. Պետական եկամուտների հավաքագրման բնագավառում առանձնահատուկ տեղ է հատկացվելու հարկային և մաքսային մարմինների տեխնիկական վերազինման աշխատանքներին, մասնավորապես.

-նախատեսվում է բոլոր մաքսային պահեստներում և մաքսային կետերում ստեղծել բեռնարկղային հրապարակներ, տեղադրել տրանսպորտային միջոցները զննող սկաներներ և այլ նմանաբնույթ սարքավորումներ: Աշխատանքներն ուղղված են լինելու նաև մաքսային համակարգում ներդնելու տրանսպորտային միջոցների հսկողության այնպիսի համակարգ, որը, դեկավարվելով մեկ կենտրոնի կողմից, հնարավորություն կտա հսկողություն իրականացնել հանրապետություն մուտք գործող և տարանցիկ մաքսային ռեժիմով տեղաշարժվող տրանսպորտային միջոցների նկատմամբ,

-նախատեսվում է հարկային հսկողական աշխատանքներում ստուգաչափող գործիքների, օպերատիվ հետախուզական գործունեության համար անհրաժեշտ սարքավորումների կիրառում:

9. Կոռուպցիոն ռիսկերի նվազեցման տեսանկյունից ծրագրվում է վերադաս հարկային և մաքսային մարմիններում ներդնել համապատասխան տարածքային մարմինների աշխատանքները տեսանելի դարձնող էլեկտրոնային համակարգեր, որոնց միջոցով տեղերում հսկողություն կսահմանվի հարկային և մաքսային գործընթացների նկատմամբ:

### **Պետական գնումների համակարգ**

2009 թվականին նախատեսվում է շարունակել գնումների համակարգի բարեփոխումները, իմնական շեշտը դնելով ՀՀ կառավարության 2006թ. հունվարի 26-ի թիվ 137-Ն որոշմամբ հաստատված էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման ռազմավարությամբ նախատեսված գործառույթների կատարման վրա, ինչպես նաև ավելացնել մրցակցային հիմունքներով գնումների կատարման ծավալները:

### **Գանձապետական համակարգ**

2009 թվականին նախատեսվում է շարունակել ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի և գանձապետական համակարգի երկրորդ սերնդի բարեփոխումների ծրագրի իրականացումը, ինչը ենթադրում է աշխատանքներ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների և կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի ներդրման ուղղությամբ:

### **Ներքին առողջության համակարգ**

2009 թվականին նախատեսվում է շարունակել աշխատանքները ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց ենթակա հիմնարկների և պետական ու համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ներքին առողջության համակարգը միջազգային չափանիշներին

համապատասխանեցնելու ուղղությամբ: Մասնավորապես օրենսդրական դաշտի մշակում՝ այդ թվում «Ներքին առողջության մասին» ՀՀ օրենքի և վերջինի կիրարկումն ապահովող այլ իրավական ակտերի հաստատում:

### **Պետական գույքի կառավարում**

1. Պետական գույքի մասնավորեցման ոլորտում նախատեսվում է.

-պետական գույքի մասնավորեցման ձևերից առավելագույնս կիրառել իրապարակային սակարկություններով մասնավորեցումը,

-մրցույթով, ուղղակի վաճառքով մասնավորեցման ներկայացնելիս ուշադրությունը կենտրոնացնել իրականացվելիք ներդրումային ծրագրերի հիմնավորվածությանը և սոցիալական երաշխիքների ապահովածությանը:

2. Պետական գույքի կառավարման ոլորտում նախատեսվում է.

-կատարելագործել պետական գույքի գնահատման, պետական գույքի վարձակալության, հանձնման և պետական գույքի հաշվառման գործընթացները,

-կատարելագործել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը հանձնելու գործընթացը:

### **Անշարժ գույքի կադաստր**

2009 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նպատակներն են հանդիսանալու.

1. Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարման համակարգի արդյունավետ կառավարման ապահովումը, անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարման ավտոմատացված համակարգի և դրա կառավարման արդյունավետ մեխանիզմների ներդրումը: Կիրականացվեն անշարժ գույքի ու նրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման աշխատանքների մատչելիությանն ու հասանելիությանը, մատուցվող ծառայությունների էլեկտրոնայնացմանն ուղղված աշխատանքներ:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն իրականացնում է գույքի (անկախ սեփականության ձևից) նկատմամբ իրավունքների ու սահմանափակումների պետական գրանցման, անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների, սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության հավաստիության, ամբողջականության, մատչելիության, արդիականության ապահովման և տրամադրման գործառույթները:

Վերջին տարիներին անշարժ գույքի շուկայի զգալի աշխուժացումը առաջացրել է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և տեղեկատվության տրամադրման գործառույթների իրականացման մեխանիզմների կատարելագործման անհրաժեշտություն:

Վերը նշված խնդիրների լուծման համար հանրապետությունում արդեն իսկ աշխատանքներ են տարվում անշարժ գույքի կադաստրային տվյալների միասնական տեղեկատվական համակարգի (Էլեկտրոնային տեղեկատվական բանկ) ներդրման ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա մեկ միասնական շտեմարանում համակարգված կարգով հավաքագրել և անընդհատ բարձացնել անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվությունը, որակական ու քանակական տվյալները : Արդյունքում հնարավորություն կստեղծվի սեփականատերերին և օգտագործողներին, ինչպես նաև համակարգից այլ օգտվողներին տրամադրել արժանահավատ և ամբողջական տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության ողջ տարածքի համար:

Կադաստրային տվյալների միասնական էլեկտրոնային տեղեկատվական բանկը հնարավորություն կրնածեղի համապատասխան հնարավորություններ ունեցող բոլոր օգտվողներին իրական ժամանակում տրամադրել գույքի նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվություն՝ ինտերնետ միջավայրում : Այդ աշխատանքների շնորհիվ հնարավոր կլինի զգալիորեն բարձրացնել մատուցվող ծառայությունների որակը, ապահովել անշարժ գույքի գույքային շրջանառության մատչելիությունը, կրճատել տվյալների բազայից տեղեկատվության (ինչպես տարածական, այնպես էլ իրավական) ստացման համար ծախսվող ժամանակը և գումարները, նվազեցնել պետական պաշտոնյաների հետ քաղաքացիների շփումը:

Անշարժ գույքի կադաստրային գնահատման աշխատանքների ավտոմատացման համակարգի ներդրման նպատակը կոմիտեի ինտերնետային կայքում անշարժ գույքի կադաստրային գնահատման ավտոմատացված համակարգի ներդրումն ու կոմիտեի տարածքային ստորաբաժանումներում կադաստրային գնահատման աշխատանքների ավտոմատացումն է: Համայնքներին յուրաքանչյուր ամիս էլեկտրոնային եղանակով տեղեկատվություն կտրամադրվի հողի հարկի և գույքահարկի բազաների փոփոխությունների վերաբերյալ: Ինտերնետային կայքում անշարժ գույքի կադաստրային գնահատման ավտոմատացված համակարգի ներդրումը հնարավորություն կտա.

- ա) օգտվողին՝ ինտերնետ միջավայրում հաշվել անշարժ գույքի կադաստրային արժեքը,
- բ) ստանալ ճշգրիտ տեղեկատվություն անշարժ գույքի կադաստրային արժեքի և գույքահարկի չափի մասին,

գ) խնայել ժամանակը անշարժ գույքի կադաստրային արժեքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու ժամանակ և նվազագույնի հասցնել քաղաքացու և պետական մարմնի աշխատակցի շփումները:

Կոմիտեի տարածքային ստորաբաժանումներում կադաստրային գնահատման աշխատանքների ավտոմատացման շնորհիվ հնարավոր կլինի.

ա) պարզեցնել կադաստրային գնահատման հաշվարկների իրականացումը,

բ) նվազագույնի հասցնել կադաստրային գնահատման հաշվարկների իրականացման համար ծախսվող ժամանակը,

գ) նվազագույնի հասցնել հաշվարկներում սխալի հնարավորությունը՝ նվազեցնելով մարդկային գործոնի ազդեցությունը:

2. Գեղեցիայի և քարտեզագրության ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացումը :

Այս ուղղությամբ կշարունակվեն պետական մասշտաբային շարքի բազային քարտեզների (տեղագրական, կադաստրային) թվային ֆոնդի ստեղծման և քարմացման աշխատանքները՝ հիմնված նորագույն՝ արբանյակային, օդային և վերգետնյա հանությային տեխնոլոգիաների վրա, ինչպես նաև արբանյակային տեխնոլոգիաների հիման վրա պետական գեղեցիական պլանային և բարձունքային ցանցի արդիականացման, բազային երկրատեղեկատվական համակարգի ներդրման, աշխարհագրական անվանումների հաշվառման ու գրանցման ավտոմատացված համակարգի ներդրման, հիմնարար քարտեզագրական ստեղծագործությունների ստեղծման աշխատանքները:

Զգալի ուշադրության կարժանանան թեմատիկ քարտեզագրության, ուսումնական և պատմական այլ քարտեզների ու ատլասների ստեղծման աշխատանքները: Աշխատանքներ կիրականացվեն հանրապետության պետական, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններին, տնտեսության տարբեր ճյուղերին, ինչպես նաև գիտության, կրթության, պաշտպանության և այլ բնագավառներին հայերեն լեզվով ստեղծված ժամանակակից պահանջներին համապատասխանող քարտեզագրական նյութերով ապահովման ուղղությամբ:

Հաշվի առնելով տիեզերական գիտության նշանակությունը Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական և գիտատեխնիկական զարգացման համար կարևորվում է Հայաստանի Հանրապետությունում տիեզերական դիտարկումների կենտրոնի ստեղծումը:

Տիեզերական դիտարկումների կենտրոնը հնարավորություն կստեղծի տիեզերական տեխնոլոգիաները գործնականում օգտագործել հանրապետության պաշտպանության, անվտանգության և տնտեսության մյուս ոլորտների խնդիրները լուծելիս: Տիեզերական դիտարկումների կենտրոնի կողմից մշակված տվյալները կօգտագործվեն գեղեցիայի և քարտեզագրության խնդիրների լուծման, շարժվող օբյեկտների նավիգացիոն համակարգերի ստեղծման, բնապահպանության, բնօգտագործման, հիդրոօդերևութաբանության, տարերային և տեխնոլոգիական աղետների, բնական միջավայրի վերահսկողության տիեզերական մոնիթորինգի, հիմնարար գիտական տիեզերական հետազոտությունների համար :

Քարտեզագրման համար կարևորագույն խնդիր է հանդիսանում նաև մեկ քարտեզագրական (հանույթային) հիմքը որպես բազային՝ սկզբունքի ներդրումը:

Այս սկզբունքի ներդրումը Էականորեն կնվազեցնի պետության կողմից ծախսվող միջոցները գեղեցիայի և քարտեզագրության, բնապահպանության, բնօգտագործման, հիդրոօդերևութաբանության, տարերային և տեխնոլոգիական աղետների կանխատեսման, բնական միջավայրի

տիեզերական մոնիթորինգի, հիմնարար գիտական տիեզերական հետազոտությունների և այլ ոլորտներում:

Հայաստանի Հանրապետության պետական գեղեցիկական ցանցը արդիական վիճակում պահպանելու համար անհրաժեշտ է պարբերաբար՝ յուրաքանչյուր տարի, դիտարկել ցանցի բոլոր կետերի ֆիզիկական վիճակը և այդ տվյալների հիման վրա կազմել տեխնիկական նախագիծ, որի հիման վրա կիրականացվեն վնասված և ոչնչացված կետերի վերականգնման, դիտարկման և այդ տվյալների մշակման, հավասարակշռման, կատարողների կազմման աշխատանքները:

3.Հողաշինարարության և հողային ռեսուրսների արդյունավետ կառավարման համակարգի ձևավորումը: Պետական և համայնքային սեփականություն համարվող հողերի օտարման և օգտագործման տրամադրման հրապարակային սակարկությունների մեխանիզմների կատարելագործումը, հողի շուկայի ձևավորման աջակցությունը :

Աշխատանքներ են իրականացվելու հողաշինարարության և հողային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգի ձևավորման, Հայաստանի Հանրապետության վարչատարածքային նոր բաժանման, պետական ֆոնդի հողերի վերաբաշխման կազմակերպման համար, կատարելագործվելու են պետական և համայնքային սեփականություն համարվող հողերի օտարման ու օգտագործման տրամադրման հրապարակային սակարկությունների մեխանիզմները, աջակցություն կցուցաբերվի հողերի միավորման ծրագրերին և հողի շուկայի ձևավորման:

4.Շուկայական մեխանիզմների վրա հիմնված՝ հարկման նպատակով գնահատման նոր համակարգի ներդրումը և անշարժ գույքի միասնական հարկին անցման աշխատանքների իրականացումը, անշարժ գույքի շուկայի իրավիճակի փոփոխությունների բացահայտում և կադաստրային գնահատման կարգերի կատարելագործում:

Անշարժ գույքի շուկայում գնագոյացմանը համահունչ կադաստրային գնահատման կարգերի սահմանման նպատակով անհրաժեշտություն է առաջացել անշարժ գույքի կադաստրային արժեքի հաշվարկման համար կիրառել շուկայական մեթոդների վրա հիմնված սկզբունքներ, հողամասը և դրա վրա կառուցված շինությունները դիտարկել և գնահատել որպես անշարժ գույքի մեկ միասնական միավոր: Անշարժ գույքի շուկայական մեթոդների վրա հիմնված միասնական գնահատման կարգերի մշակման նպատակով պարբերաբար իրականացվում են համակարգված դիտարկումներ, որի հիմնական խնդիրն է անշարժ գույքի շուկայի գնային իրավիճակի վերաբերյալ վերլուծական տեղեկատվության ապահովումը, անշարժ գույքի կադաստրային գնահատման կարգերի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակում՝ հողամասերի և շենքերի ու շինությունների միասնական գոտիների սահմանների նկարագրում, տարածագնահատման միասնական գոտիականության գործակիցների և բազային արժեքների դուրս բերում, ինչպես նաև անշարժ գույքի կադաստրային միասնական գնահատման բանաձևերի մշակման և հետագա կատարելագործման առաջարկությունների ներկայացում:

5. Անշարժ գույքի շուկայի գարգացմանն աջակցությունը :

Անշարժ գույքի շուկայի համաշափ զարգացման համար կկարևորվի անշարժ գույքի աճող պահանջարկի և առաջարկի գնահատումը, դրանց առանձնահատկությունները: Աշխատանքներ կիրականացվեն նաև անշարժ և շարժական գույքի գրափի, ֆինանսական վարձակալության (լիգինգի) գրանցման մեխանիզմների պարզեցման ուղղությամբ:

### **Պետական վիճակագրություն**

Պետական վիճակագրության հիմնական խնդիրների և հիմնարար սկզբունքների ապահովման նպատակով, մասնավորապես նախատեսվում է.

- Վիճակագրության միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանման համատեքստում՝ շարունակել վիճակագրության ինստիտուցիոնալ վերափոխման գործընթացները, հետամուտ լինելով նաև վիճակագրական հարաբերությունները կարգավորող օրենսդրական համապատասխան փոփոխությունների իրականացմանը,
- Վիճակագրական մեթոդաբանության շարունակական կատարելագործման, միջազգային չափանիշների հետ դրա ներդաշնակեցման ու միասնականացման, ինչպես նաև վիճակագրական ցուցանիշների միջազգային համադրելիության ապահովման նպատակով՝ շարունակել և ընդլայնել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության միջազգային համագործակցությունը,
- Վիճակագրական տվյալների որակի և թափանցիկության ապահովման նպատակով՝ շարունակել տեղեկատվության տարածման միջազգայնորեն ընդունված չափանիշների ներդրման ու կիրառման աշխատանքները (մասնավորապես՝ ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից մշակված «Տվյալների տարածման հատուկ ստանդարտի»), ինչը ենթադրում է նաև Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական ինտերնետային էջի անխափան շահագործում և տեղեկատվության կազմի ու որակի, ինչպես նաև մեթոդաբանական տվյալների պարբերական արդիականացում,
- Վիճակագրության մեթոդաբանության զարգացմանը գուգընթաց՝ շարունակել ներկայումս գործող վիճակագրական դիտարկման փաստաթղթերում արտացոլված ցուցանիշների կազմի ու բովանդակության վերանայման, վիճակագրական դիտարկման փաստաթղթերի միասնականացման աշխատանքները, միաժամանակ նպատակ ունենալով նվազագույնի հասցնել տեղեկատվության որակի, ամբողջականության և արժանահավատության վրա վերջինիս հնարավոր բացասական ազդեցությունները, -համալրել, արդիանականացնել և ամբողջականացնել (նվազագույնը՝ ամենամյա պարբերականությամբ) բիզնես-ոեգիստրի տվյալների բազան (իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերների մասով) և որպես դրա հետևանք՝ աստիճանական անցում կատարել տեղեկատվության հավաքագրման ընտրանքային եղանակների ներդրմանն ու կիրառմանը,
- շարունակել տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգման ու կողագորման միասնական համակարգի մասը կազմող ազգային դասակարգիչների մշակման ու ներդրման (այդ թվում՝ վիճակագրության համար տարածքային միավորների ընդհանրական դասակարգչի, անհատական սպառման՝ ըստ նպատակների դասակարգչի, վիճակագրական միավորների դասակարգչի

- և այլն), ինչպես նաև արդեն իսկ պետական վիճակագրությունում ներդրված ու կիրառվող դասակարգիչների կատարելագործման աշխատանքները (այդ թվում՝ հաշվի առնելով տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի և արտադրանքի դասակարգչի նախատեսվող հիմնարար փոփոխությունների տեղայնացման հանգամանքը),
- անցում կատարել վարչական ռեգիստրների միջոցով տեղեկատվության հավաքագրման մեխանիզմի ամբողջական կիրարկմանը, հաշվի առնելով պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերով սահմանված համապատասխան աշխատանքների իրականացման ապահովումը,
  - տեղական (համայնքային) վարչական ռեգիստրների (այդ թվում՝ համայնքների անձնագրերի) ներդրմանը և վարմանը գուղընթաց, կատարելագործել և ընդլանել տարածքային վիճակագրության վարման համար անհրաժեշտ ցուցանիշների կազմն ու բովանդակությունը,
  - շարունակել գեներային կտրվածքով վարվող վիճակագրության ամբողջականացմանն ուղղված աշխատանքները,
  - ցուցանիշների նախապատրաստման օպերատիվության ապահովման նպատակով՝ աշխատանքներ իրականացնել տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ և կիրառմամբ տեղեկատվության էլեկտրոնային հավաքագրման ուղղությամբ,
  - վիճակագրական տեղեկատվության սպառողների (օգտագործողների) պահանջարկի առավել ամբողջական և օպերատիվ բավարարման նպատակով՝ ընդլանել վիճակագրական հրապարակումների (տեղեկագրեր, ժողովածուներ և այլն) կազմը, բովանդակությունն ու թեմատիկ ընդգրկումը, ընդլայնելով նաև տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ դրանց տարածման հնարավորությունները,
  - կատարելագործել վիճակագրական տեղեկատվության սպառողների (օգտագործողների) համար Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական ինտերնետային էջից ժամանակի իրական ռեժիմով ամփոփ տեղեկատվության ստացման մեխանիզմը:

### **ՀՀ ոստիկանություն**

Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը 2009 թվականի բյուջետային տարում շարունակելու է բարեփոխումները հասարակական կարգի պահպանման, հասարակական անվտանգության ապահովման, հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման, ոստիկանության կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի և մատչելիության, ընդիհանուր առմամբ գործունեության բափանցիկության բարելավման ուղղությամբ: Առաջիկա տարում ոստիկանության համակարգի բարեփոխումների առանցքային ուղղություններն են լինելու՝

- Բնակչության պետական ռեգիստրի վարման կատարելագործումն, այն իմաստով, որ ռեգիստրում կուտակվող տեղեկատվությունը ցանկացած պահի լինի ճշգրիտ և բարմ:
- ՀՀ ոստիկանության գերակա խնդրի՝ տեղեկատվական համակարգերի կատարելագործում և նոր ինֆորմացիոն միջավայրի ձևավորում:

- ճանապարհային երթևեկության անվտանգության բարձրացում, ճանապարհային երթևեկության բոլոր մասնակիցների կարգապահության հետագա ամրապնդում և անընդհատ պահպանման ապահովում:

Բարեփոխումների ծրագրով նախատեսվում է իիմնովին վերազինել ծառայությունը, բարձրացնել ծառայություն կատարող վերակարգերի գործունեության արդյունավետությունը, ինչպես նաև հանրապետության խոշոր քաղաքների խաչմերուկներում և մայրուղիներում տեղադրել տեսադիտման և արագաչափ ավտոմատ սարքեր, որոնք հնարավորություն կտան արձանագրելու իրավախսումները:

Նախատեսվող կառուցվածքային փոփոխություններից պետք է առանձնացնել ՀՀ ոստիկանության համակարգում քաղաքացիության միզրացիայի դեպարտամենտի ստեղծումը, որով ակնկալվում է հասնել նշված ոլորտի առավել արդյունավետ համակարգման: 2010 թվականից նախատեսվում է միջազգային չափանիշներին համապատասխանող Հայաստանի Հանրապետությունում կենսաշափական կողմնորոշչիներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնացման քարտերի համակարգի ներդրում:

Զգալի աշխատանքներ է կատարվելու ոստիկանության համակարգում քաղաքացիական հատուկ ծառայության համակարգը ներդնելու, ձևավորելու, վերջինիս ոստիկանության ծառայության հետ ներդաշնակեցնելու, մեծածավալ ենթաօրենսդրական ակտերը մշակելու և կիրառելու ուղղությամբ:

ՀՀ ոստիկանության համակարգային բարեփոխումների արդյունավետ, ինչպես նաև հակակոռուպցիոն ռազմավարության հաջող իրազործման կարևորագույն իիմնախսնդիր է ոստիկանության ծառայողների վարձատրության և սոցիալական ապահովության համակարգի բարելավումը:

### **Բարեփոխումները բյուջեների կազմման բնագավառում**

2009թ. շարունակվելու են բարեփոխումները բյուջեների կազմման բնագավառում՝ ծրագրային բյուջետավորման տարրերի արմատավորման ուղղությամբ: